

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԳԻՏԱՖԱՆՏԱՍՏԻԿ ԴԻՄԿՈՒՐՄԻ
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԲԱՆԱԿԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ (անգլերեն)»
մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական խորհրդատու՝ Բ.Գ.Պ., պրոֆ. Ս. Ք. Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆ. Կ. Շ. Աբրահամյան
Բ.Գ.Պ., պրոֆ. Շ. Հ. Պարոնյան
Բ.Գ.Պ., պրոֆ. Ա. Հ. Զիվանյան

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 28-ին ժամը 11⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝

Ե. Լ. Երզնկյան

Ժամանակակից **անգլալեզու գիտաֆանտաստիկ դիսկուրսն** առեղծվածների, խորհրդանիշերի, ժամանակի ու տիեզերքի, իրական ու հորինված աշխարհների, գիտությունների, մշակույթների ու մարդկային կերպարների ամբողջություն է, որի էությունն ու նպատակը վաղվա օրն ավելի լավ տեսնելու երազանքն է: Մարդասիրություն ու համամարդկային վեհ գաղափարներ քարոզող գրական այս ժանրը գիտականի/բանականի ու գեղարվեստականի/երևակայականի հակադրամիասնություն է, որտեղ հաղորդման և ներգործման գործառույթներ իրացնող լեզվական տարրերի փոխազդեցությունը հանգեցնում է գիտագեղարվեստական փոխներթափանցված խոսքային դրսևորումների:

19-րդ դարակյան բանական և երևակայական գործոնների և լեզվական տարրերի միաձուլման արդյունքում ձևավորվեց հետագայում «բուն գիտաֆանտաստիկա» անվանումը ստացած գրական դրսևորումը: 20-րդ դարի 30-ականներին արդեն զարգացման որոշակի աստիճանի հասած խոսքի այդ տարատեսակը համարվեց գեղարվեստական գրականության յուրատիպ ժանր և ստացավ «գիտական գեղարվեստական գրականություն» կամ «գիտաֆանտաստիկ գրականություն» անվանումը: Թեև գիտաֆանտաստիկայի սկզբնավորման և ձևավորման այդ փուլում, գիտականի և գեղարվեստականի համաձույլ հենքի վրա ստեղծվեցին արտահայտիչ լեզվական պատկերներ, այնուամենայնիվ, թեմատիկ, աշխարհայացքային և լեզվառճական առումներով գիտաֆանտաստիկ դիսկուրսը (հետայսու՝ ԳՖԴ) դեռևս համարվում էր «պարզունակ»:¹ Ոսկեդարյան շրջանում (1938-1960) ԳՖԴ-ն աստիճանաբար սկսեց ձևավորել լեզվական/արտալեզվական առանձնահատկությունների իր սեփական, համապարփակ համակարգը, մշակվեցին բնորոշ գրական նորմերն ու որոշարկվեց հիմնական թեմատիկ ուղղվածությունը (փոփոխություն, ժամանակ, տիեզերք և այլն):

Ոսկեդարն ավարտվեց անցյալ դարի 60-ականներին, երբ հզոր արտալեզվական գործոնի՝ գիտության և տեխնոլոգիայի աննախադեպ առաջընթացի շնորհիվ առաջացավ սոցիալական ուղղվածություն ունեցող նորալիքյան գիտաֆանտաստիկան (1960-1980): Այս շրջանում ԳՖԴ-ն վերջնականապես ձևավորվեց որպես սոցիալ-հասարակական և գիտա-տեխնոլոգիական արտալեզվական գործոնների, փոփոխության գաղափարի, լեզվառճական կանոնարկված համակարգի վրա հիմնված և գեղարվեստական ոճի մյուս դրսևորումներին հավասար կարգավիճակ ունեցող խոսքային տարատեսակ, որն էլ լեզվաբանական ուսումնասիրության հետաքրքիր նյութ է: Այս փուլի կարևոր նվաճումներից կարելի է համարել նաև գիտաֆանտաստիկ գրականության ակադեմիական ուսումնասիրությունների միջգիտակարգի ձևավորումը 1970-ականներին: Մինչ այդ, հասարակության և մարդու՝ որպես անհատի, գիտական և գեղարվեստական ընկալումների զարգացման գործում կարևորագույն դեր կատարող գիտաֆանտաստիկ ժանրը, լայն առումով, մի շարք երկրներում դուրս էր մնացել գիտակրթական հետաքրքրությունների ոլորտից և անտեսվել լեզվաբանների և գրաքննադատների կողմից, քանի որ չէր համարվում ուսումնասիրության լուրջ

¹ Asimov, I. (ed) *Before the Golden Age: A Science Fiction Anthology of the 1930s*. NY: Doubleday, 1974.

առարկա, «իսկական գրականություն»:¹ Նախորդ դարի 90-ականներից սկսած, երբ համընդհանուր ազգակենտրոն գաղափարախոսությունը թուլացավ և որոշակի նահանջ ապրեց, մինչ այդ «ստորադաս», «անլուրջ», «անտեսված»² համարվող ժանրը սկսեց ավելի շատ գրավել ընթերցողների ու հետազոտողների ուշադրությունը:

20-րդ դարի 80-ականներից սկսած, նոր արտալեզվական գործոնների, մասնավորապես համակարգչային տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման թելադրանքով ԳՖԴ-ն ենթարկվեց նկատելի ներլեզվական ոճագործառական փոփոխությունների, որոնք արտահայտվեցին նորալիքյան լեզուն կատարելության հասցրած սայբերփանքյան գիտաֆանտաստիկայում: Վերջինս, 1990-ականներից հետո, վերանվանվեց «հետսայբերփանք», և, սայբերփանքյան ավանդույթները պահպանելով հանդերձ, ընդլայնվեց և իր ազդեցության ոլորտ ներառեց ժամանակակից կինոարդյունաբերության, երաժշտության, արվեստի, դիզայնի, համակարգչային հաղորդակցության հետ առնչվող նոր հասկացություններ, տերմիններ, լեզու և ոճ:

Մեզ համար ելակետային համարվող նորալիքյան շրջանի ձեռքբերումները փաստելուց հետո հարկ ենք համարում նշել, որ սույն ատենախոսության մեջ հետազոտվող և վերլուծվող *փաստական նյութ*ն ընդգրկում է նորալիքյան 1960-ականների վերջերից մինչև մերօրյա հետսայբերփանքյան ժամանակաշրջանում գրված անգլալեզու գիտաֆանտաստիկ ստեղծագործություններ: Հետազոտվել է շուրջ վեց հազար էջ փաստական նյութ: Հարկ ենք համարում նշել, որ նորալիքյան շրջանից ցայսօր գիտաֆանտաստիկ ուսումնասիրություններով հետաքրքրվել են ոչ միայն գրականագետներ և լեզվաբաններ, այլև բազմաթիվ այլ հումանիտար և բնագիտական ոլորտներում ներգրավված մասնագետներ և գիտնականներ. դեռևս երիտասարդ գիտաֆանտաստիկ գրականության ակադեմիական ուսումնասիրությունների շրջանակներում տրվել են ժանրի բազմաթիվ սահմանումներ, մանրակրկիտ ուսումնասիրվել են ԳՖԴ-ի պատմությունը, մշակույթը, առանձին վերցված գրական ստեղծագործությունները, դրանց հիմքում ընկած բազմազան հումանիտար և բնագիտական տեսությունները, բնականի և գերբնականի հարաբերակցությունը, բանականի և երևակայականի արտահայտման հոգեբանական, փիլիսոփայական և այլ գիտական ձևերը, բայց երբեք առանձնահատուկ ուշադրության առարկա չեն դարձել ԳՖԴ-ի՝ որպես անգլալեզու ոճագործառական ինքնատիպ դրսևորման, լեզվական ու խոսքային առանձնահատկությունները:

Մրանով էլ պայմանավորված է ներկա ատենախոսության *ուսումնասիրության առարկայի*՝ ժամանակակից անգլալեզու ԳՖԴ-ի ընտրությունը: Ձևավորվելով անգլերեն գրական լեզվի սահմաններում և դրա պատմական հիմքի վրա՝ այս դիսկուրսն աչքի է ընկնում ուրույն ոճաճանաչողական տարրերի համալիր

¹ Wolfe, G. K. *Critical Terms for Science Fiction and Fantasy: A Glossary and Guide to Scholarship*. New York: Greenwood Publications, 1986:xi.

² Freedman, C. H. *Critical Theory and Science Fiction*. Middletown, CT: Wesleyan University Press, 2000; Kraus, E. *The Neglected Genres in the Classroom*. Salzburg, Austria, 1997. <<http://www.salsem.ac.at/scacl/progs/genre>>, Accessed March 3, 2014.

ամբողջությամբ: Ընդ որում ոճականորեն երանգավորված միավորների այդ համակարգում լեզվական տարրերի բանական–երևակայական սերտ հարաբերակցությունն ուղղված է իրականացնելու որոշակի հաղորդակցական նպատակ: Գեղարվեստական ոճին պատկանող խոսքային այս ուրույն դրսևորման կիրառությունը կախված է ոչ միայն վերոհիշյալ նպատակից, այլև նրա հատուկ բովանդակությունից և գիտական հասկացություններ ու գեղարվեստական պատկերներ ներկայացնող լեզվական տարրերի սերտ հարաբերակցությունից: Ընդ որում, լեզվական տարրերի ոճագործառական–ճանաչողական առանձնահատկությունները պայմանավորված են ներլեզվականի և արտալեզվականի խոսքային միասնությամբ, հետևաբար, ԳՖԴ-ի քննությունը ենթադրում է լեզվական տարրերի այն բոլոր փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների ուսումնասիրություն, որոնք իրականանում են արտալեզվական հիմքի վրա և իրացնում իրենց գործառական նպատակը:

Կարևորելով ատենախոսության նպատակը, այդուհանդերձ նախ անդրադառնանք հետազոտության **մեթոդաբանությանը**, քանի որ նոր, դեռևս երիտասարդ գիտաֆանտաստիկ գրականության ակադեմիական ուսումնասիրությունների ներկայիս ձեռքբերումների համատեքստում անգլալեզու ԳՖԴ-ին անդրադարձը և ոճատարբերակիչ առանձնահատկությունների բացահայտումը առավելապես պայմանավորված է «տեսական մեթոդաբանության հիմնավորմամբ»,¹ և քանի որ բանականի և երևակայականի փոխազդեցությունը ժանրում հիմնարար որակական հատկանիշ է, ակնհայտ է, որ հենց այս հատկանիշը պետք էլակետային գործոն դառնա մեթոդաբանության ընտրության գործում: Հենց այս սկզբունքով էլ առաջնորդվել ենք՝ հիմնավորելու համար կիրառված մեթոդների ընտրությունը: Ընդ որում, փաստական նյութն ուսումնասիրվել է լեզվաբանական երկու ուղղությունների շրջանակներում՝ 20-րդ դարի 50-ականներին առաջացած գործառական ոճագիտության (որպես խոսքաբանական գիտություն այն հնարավորություն է տալիս քննելու լեզվական երևույթները գործածության մեջ՝ չզատելով դրանք տարաբնույթ այլ լեզվական իրողություններից)² և 21-րդ դարի առաջին տասնամյակում մուտք գործած, գրաքննադատության, լեզվաբանության և ճանաչողական գիտության եռամիասնության վրա հիմնված, «գործնական և տեսական միջգիտակարգայությամբ»³ աչքի ընկնող ճանաչողական ոճագիտության, որը հնարավորություն է տալիս գրական պատմասությունը լեզվաբանական վերլուծության ենթարկել բանականի և երևակայականի, օբյեկտիվի և սուբյեկտիվի, գիտական տեսության և ստեղծագործ մտքի փոխազդեցության

¹ Suvin, D. R. *Metamorphoses of Science Fiction: On the Poetics and History of a Literary Genre*. New Haven and London: Yale University Press.

² Գասպարյան Ս., Սուրադյան Գ., Գասպարյան Ն. *Գործառական ոճագիտություն. Անգլերենի գործառության արդիական հարցեր*: Երևան: ԵՊՀ, 2011:

³ Freeman, D. *Afterword// Cognitive Stylistics: Language and Cognition in Text Analysis*. E. Semino and J. Culpeper (eds). Amsterdam: John Benjamins, 2003.

համատեքստում՝ մշտապես հաշվի առնելով խոսքաստեղծման և խոսքի ընկալման հիմքում ընկած ճանաչողական կառույցներն ու գործընթացները:¹

ԳՖԴ-ի բանական-երևակայական հակադրամիասնության վրա ամուր խարսխված, հաղորդման (տեղեկատվական) և ներգործման (գեղագիտական) գործառնություններ իրացնող լեզվական տարրերի քննության լավագույն միջոցներ են լեզվաոճական և լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդները, որոնք թեն ճանաչողական ոճագիտության շրջանակներում իրացվող մեթոդների հետ համեմատած, կարող են որոշ չափով «սահմանափակ» համարվել, այդուհանդերձ բավմիջս ապացուցել են իրենց կիրառության արդյունավետությունը գործառնական ոճական ուսումնասիրություններում անզլերեն լեզվի ոճական դրսևորումների իմաստային և վերնշնային մակարդակներում իրացվող լեզվական տարրերը վերլուծելու և դրանց հաղորդակցական-խոսքային առանձնահատկությունները բացահայտելու գործում: Վերնշնային մակարդակի լեզվական միավորների քննության լավագույն մեթոդ է նաև որակական և քանակական ոճական վերլուծության մեթոդը: Որակական ոճական վերլուծության մեթոդը կարևորում է այն լեզվաոճական առանձնահատկությունները, որոնք ընթերցողի մոտ որոշակի հուզական արձագանքներ են առաջացնում և որոնց ընկալումը որոշակի ներըմբռնողական կարողություն է պահանջում, իսկ քանակականը կարևորում է այդ տարրերի կիրառելիության հաճախականությունը և հանդես է գալիս որպես ոճական նշույթները տարբերակող և հաշվարկող միջոց:²

Ճանաչողական ոճագիտական վերլուծություններում առավելապես կարևորում ենք իրավիճակային-փաստարկային քննության մեթոդը, որը թույլ է տալիս գիտությանն առնչվող փաստարկները կիրարկել որպես գրական համատեքստի լեզվական տարրերի փոխհարաբերությունները և դրանց՝ ընթերցողի ու հասարակության վրա ուղղակի և գեղագիտական ազդեցությունները բացահայտելու միջոց:³ Ընդ որում, այս մեթոդի պահանջներից մեկն այն է, որ ուսումնասիրության առարկան լինի ժամանակակից:⁴ Նպատակահարմար ենք գտել կիրառել նաև

¹ Turner, M. *The Literary Mind: The Origins of Thought and Language*. Oxford: OUP, 1996; Weber, J. J. (ed) *The Stylistics Reader: From Roman Jakobson to the Present*. London: Arnold, 1996; Hernadi, P. *Why Is Literature: A Co-Evolutionary Perspective on Imaginative Worldmaking*.//Poetics Today, N23/1, 2002; Richardson, A. and Steen F. F. *Literature and the Cognitive Revolution*.//Poetics Today: International Journal for Theory and Analysis of Literature and Communication, Volume 23/1, 2002; Simpson, P. *Stylistics: A Resource Book for Students*. London: Routledge, 2004; Burke, M. *How Cognition can Augment Stylistic Analysis*.//*European Journal of English Studies*, N1, 2005; Hamilton, C. *Stylistics or Cognitive Stylistics?*//*Bulletin de la Société de Stylistique Anglaise*, N 28, 2006; Semino, E. and Culpeper, J. (eds) *Cognitive Stylistics: Language and Cognition in Text Analysis*. Amsterdam: John Benjamins, 2003:ix.

² Kies, D. *Suppressing Agency in Nineteen Eighty-Four*.//*Advances in Systemic Linguistics*. London: Frances Pinter, 1992:242.

³ Yin, R. K. *Case Study Research: Design and Methods*. Newbury Park, CA: Sage, 1984; Stake, R. E. *The Art of Case Study Research*. London, New Delhi: Sage, 1995; Simons, H. *Case Study Research in Practice*. London: Sage, 2009.

⁴Johansson, R. *Case Study Methodology*.//International Conference on Methodologies in Housing Research. Stockholm, 2003:2-3.

արտարկման վերլուծության մեթոդը, որը թույլ է տալիս բացահայտել բանական հենքի (գիտական փաստերի ու տեսությունների) վրա կառուցված երևակայական լեզվական պատկերները: Օրինակների քննության լավագույն միջոց է նաև գծային արտարկման մեթոդը, որը հիմնված է մաթեմատիկական գծային արտարկման բանաձևի՝ հաստատուն և փոփոխական լեզվական միավորների տարանջատման, դրանց արժեքի, սերտ կապի ու փոխկապվածության բացահայտման վրա:¹ Գիտաֆանտաստիկ փոխաբերության ոճագործառական և ճանաչողական որակները բացահայտելու համար կիրառել ենք հասկացական փոխաբերայթի տարբերակման և վերլուծության մեթոդը՝ քննելով լեզվաոճական այն միավորները, որոնք հանդես են գալիս որպես արտաքին աշխարհը ճանաչելու, «հասկացականացնելու» միջոց:² Այս մեթոդը բացառիկ հնարավորություն է տալիս վերլուծելու ԳՖԴ-ի գոյաբանական հիմքը կազմող փոփոխության գաղափարից և այդ գաղափարն արտացոլող համընդհանուր *Change is motion* հասկացական փոխաբերայթից ածանցվող ենթափոխաբերայթները, որոնց աստիճանակարգային հարաբերակցությունը ներկայացվել է դասակարգման տաքսոնոմիկ մեթոդի հիման վրա: Բառային շարքայթները, մասնավորապես՝ գործուն վերջածանցով կարգային ձևերը, դիտարկվել են վիճակագրական մեթոդի կիրառմամբ: Որպես գիտահետազոտական համընդհանուր վերլուծության միջոց կիրառվել է որակական և քանակական վերլուծության մեթոդը:

Ճիշտ մեթոդաբանության ընտրությունը սկզբունքային կարևորություն ունի և հնարավորություն է տալիս իրականացնելու սույն հետազոտության *նպատակը*՝ անգլավեզու ԳՖԴ-ում վեր հանել և ուսումնասիրել լեզվական ու ոճական այն նորմերը, որոնք էապես կարևոր դեր են խաղում բանականի և երևակայականի համաձույլ դրսևորումներ ներկայացնող պատկերներ կերտելու, գիտագեղարվեստական նոր, յուրօրինակ խոսքաձև կառուցելու գործում: Նպատակադրվել ենք նաև ցույց տալ, որ ԳՖԴ-ն գեղարվեստական գրականության մյուս ժանրերից տարբերվում է. հուզական զգացողություններ արթնացնելուց բացի, ընթերցողի վրա ներգործում է նաև իրական կամ հորինված գիտական ազդակների միջոցով: Աշխատանքի նպատակն է նաև նպաստել այն կարծիքի հաստատմանը, որ մոտ անցյալում անտեսված, արհամարհված համարվող ժանրը (հատկապես հայ գիտական շրջանակներում) իրոք կարևոր ու հետաքրքրական նյութ է լեզվաբան-հետազոտողի համար, և որ այդ նյութի իմացությունը հեշտացնում է խոսքային հաղորդակցությունը, զարգացնում խոսքի մշակույթը, նպաստում լեզվի իմացության ու ուսուցման մակարդակի բարձրացմանը: Նշված նպատակներին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները

1. Էլակետային համարելով բանական – երևակայական գոյաբանական հակադրամիասնությունը՝ վերլուծել և ներկայացնել գիտական և գեղարվեստական լեզվաոճական փոխներթափանցումները որպես խոսքային իրողություն ԳՖԴ-ում,

¹Armstrong, J. S. and Collopy, F. *Causal Forces: Structuring Knowledge for Time-series Extrapolation.*//Journal of Forecasting, N12, 1993.

² Lakoff, G. and Johnson, M. *Metaphors We Live By.* Chicago: University of Chicago, 2003.

2. ներկայացնել ԳՖԴ-ի ծագումը, համառոտ պատմությունը, զարգացման ժամանակագրությունը, թեմատիկ, ոճագործառական և այլ առանձնահատկություններ,
3. դիտարկել փոփոխության գաղափարը որպես ժանրի գաղափարախոսության հենքային տարր, որը նախ և առաջ հիմնված է փոփոխության գիտատեխնոլոգիական և սոցիալ-հասարակական հասկացությունների վրա,
4. դասակարգել գեղարվեստական ոճի մտահայեցական ենթաոճին պատկանող գիտաֆանտաստիկ ժանրը ըստ որոշակի լեզվական և ոճագործառական հատկանիշների՝ առանձնացնելով մի շարք, առավել աչքի ընկնող ենթաժանրեր,
5. քննել ԳՖԴ-ի իրացումը և ներլեզվական գործառական դիսկուրսիվ առանձնահատկությունները պայմանավորող արտալեզվական հիմքերը՝ ի դեմս մի շարք ճշգրիտ և հումանիտար գիտական առնչությունների,
6. հիմնվելով գործառական և ճանաչողական ոճագիտության ոլորտներում կատարված հետազոտությունների, և հատկապես գիտաֆանտաստիկ դիսկուրսի քննության համար մեր ընտրած մեթոդների կիրառմամբ ֆիզիկական, մարդաբանական սոցիոլոգիական և փիլիսոփայական գիտաֆանտաստիկ լեզվական նյութի քննության արդյունքների վրա՝ բնութագրել ԳՖԴ-ն որպես գիտաֆանտաստիկ արտարկումներով հանդես եկող մարդկային երևակայության լեզվական արտահայտություն, որպես բանական և երևակայական լեզվական միավորների ուրույն «համաձուլվածք», որն ուղղված է իրացնելու ինչպես ճանաչողական, այնպես էլ ներգործման (գեղագիտական) գործառույթ:
7. հատկապես կարևորելով փիլիսոփայական տեսական դրույթների դերը խնդրո առարկա դիսկուրսում՝ փաստել այդ դրույթների գործառությունը և հետազոտել դրանց խոսքային/լեզվաոճական տարատեսակ արտահայտությունները գիտաֆանտաստիկ փաստական նյութում,
8. մեկնաբանել բանական – երևակայական հակադրամիասնության քննության տեսական դրույթները, փաստական նյութի ոճագործառական վերլուծությամբ հիմնավորելով այն փաստը, որ անկախ հարաբերակցության աստիճանից՝ բանականն ու երևակայականը մշտապես համագործակցում են լեզվական միավորների կիրառության բոլոր մակարդակներում,
9. բացահայտել բանական գործոնի դերն ու նշանակությունը ԳՖԴ-ի գրական առնչություններում (առասպել, հեքիաթ, բուն գեղարվեստական գրկանություն):
10. ներմուծել **«Ճանաչողական երևակայություն»** տերմինը և հիմնավորել դրա կիրառության նպատակահարմարությունը՝ հաղորդման և ներգործման լեզվական տարրերի միաձույլ դրսևորումներով ներկայացող ԳՖԴ-ի ճշգրիտ բնորոշումը տալու համար,
11. բացահայտել ԳՖԴ-ին բնորոշ լեզվաոճական միավորների՝ գիտական բառապաշարի, լեզվարտահայտչական միջոցների և ոճական հնարների, մասնավորապես փոխաբերության (փոխաբերույթ, համեմատություն, անձնավորում, բառային հակադրություն, չափազանցություն, հեզնանք) կիրառության առանձնահատկությունները,

12. դիտարկել ԳՖԴ-ին բնորոշ մակդիրային կապակցությունների և *-ly* գործուն վերջածանցով շարությաների կիրառության առանձնահատկությունները,
13. բացահայտել գիտաֆանտաստիկ նորաբանությունների իմաստակառուցվածքային ոճատարբերակիչ յուրահատկությունները,
14. կարևորելով փոխաբերության գործառական արժեքը ԳՖԴ-ում՝ ներմուծել **«փոխաբերական միաձուլում»** տերմինը՝ բնութագրելու համար գիտաֆանտաստիկ փոխաբերությունը որպես ճանաչողականի պատկերավոր դրսևորման ձև, որպես հասկացական և երևակայական փոխաբերությունների միաձուլման արգասիք,
15. կազմել գիտաֆանտաստիկ հասկացական *Change is motion* առաջնային փոխաբերության և դրա ընդլայնման արդյունքում ձևավորված ենթափոխաբերությունների ճանաչողական տաքսոնոմիկ մոդելը,
16. դիտարկել ապափոխաբերականացումը որպես ԳՖԴ-ի եզակիությունը փաստող ոճատարբերակիչ հնար:

Կարևորելով լեզվաբանության և լեզվաբանական տեսությունների դերը գիտաֆանտաստիկ նյութի քննության գործում՝ դեռևս երիտասարդ գիտաֆանտաստիկ գրականության ակադեմիական ուսումնասիրությունների ոլորտը, առայժմ այդ նյութի վերլուծության որևէ կոնկրետ, առավել նպատակահարմար մեթոդ կամ տեսություն չի առաջարկել: Ավելին՝ ընտրության իրավունքի ազատությամբ խրախուսելով հետազոտողին՝ մեծապես նպաստում է ոլորտի հետագա ընդլայնմանն ու զարգացմանը, նոր գաղափարների ու տեսությունների, նյութի քննության նոր մեթոդների ու ձևերի ներմուծմանը: Հենց այս մոտեցմամբ էլ պայմանավորված է մեր հետազոտության ***տեսական արժեքը***: Բնչպես արդեն նշել ենք, աշխատանքի տեսական հիմքը գործառական ոճագիտությունն է և ճանաչողական ոճագիտությունը, որոնց հիմնական խնդիրը լեզվական հաղորդակցության խոսքային առանձնահատկությունների ուսումնասիրությունն է, դիսկուրսի՝ որպես որոշակի օբեկտներով կանոնակարգվող գործընթացի դիտարկումը: Երկու գիտակարգերն էլ գրական ստեղծագործությունների լեզվաոճական հետազոտություններում գլխավորապես կարևորում են արտալեզվական գործոնների և մարդկային մտածողության երկու կողմերի՝ տրամաբանական ճանաչողության և զգացումնքային ընկալման սկզբունքային տարբերության վրա հիմնված բանական/գիտական և երևակայական/գեղարվեստական, հաղորդման և ներգործման, ճանաչողական/հասկացական և պատկերավոր/հուզական, ուղղակի և փոխաբերական լեզվական տարրերի հակադրամիասնության դերը: Հետազոտության մեջ քննարկվող տեսական դրույթները հիմնված են տվյալ հակադրամիասնությունը կարևորող բազմաթիվ և բազմազան գիտահետազոտական աշխատություններում տեղ գտած տեսությունների, սահմանումների, դիտարկումների, բնութագրումների, դասակարգումների վրա, որոնք հիմք են դարձել սույն ուսումնասիրության հիմնական սկզբունքների ձևավորման համար: Հաշվի են առնվել տարբեր լեզվաբանական դպրոցների և լեզվաբանների, գիտաֆանտաստիկ հեղինակների ու գիտաֆանտաստիկայի տեսաբանների ու վերլուծաբանների, այլ գիտնականների (ֆիզիկոս, հոգեբան, փիլիսոփա, սոցիոլոգ և

այլն) առաջադրած, սույն ուսումնասիրության համար էական կարևորություն ունեցող դրույթներն ու սկզբունքները, գիտական փաստերն ու վարկածները, մեթոդներն ու մոտեցումները: Տեսական առումով սույն ուսումնասիրությունը փորձ է առաջադրված հարցադրումների, բացահայտումների և հիմնավորումների, ինչպես նաև վերլուծությունների, մեկնաբանությունների, բացատրությունների, դասակարգումների, փաստարկումների միջոցով նպաստելու ժամանակակից ԳՖԴ-ի գործառության մեկնաբանմանը, դրա դիսկուրսիվ լեզվառճական նշանակության կարևորմանը, ինչպես նաև գործառական և ճանաչողական ոճագիտական տեսությունների զարգացմանը:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է այն վճռորոշ դերով, որ որպես ժամանակակից և նույնիսկ գերժամանակակից խոսքային դրսևորում, ԳՖԴ-ն այսօր կատարում է համաշխարհային և արդեն նաև հայ հասարակական կյանքում՝ նպաստելով լեզվի ու խոսքային հաղորդակցության նոր ձևերի առաջացմանը, զարգացմանը, ուսուցմանն ու ընկալմանը, մշակութային ու տեղեկատվական փոխանակումների, հասարակական գործընթացների նկատմամբ նոր վերաբերմունքի ձևավորմանը, համամարդկային բարձր արժեքների քարոզչությանն ու տարածմանը: Գլոբալիզացիայի և անգլերեն լեզվի միջազգայնացման ժամանակակից փուլում տվյալ ոճաձևի անընդհատ զարգացումն ու ճյուղավորումը կապված է գրական անգլերենի ժողովրդավարացման և համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացի հետ, երբ լեզուն և տեղեկատվական տեխնոլոգիաները մատչելի են դառնում հասարակության ավելի ու ավելի լայն խավերի համար: ԳՖԴ-ն այսօր արտահայտվում է զանգվածային հաղորդակցության (ներառյալ համակարգչայինը) միջոցներում և այլ ոլորտներում: Ժանրում դրսևորվող լեզվական հարստությունը այն դարձնում են առավել ժամանակակից և ուշագրավ: Եվ քանի որ անգլալեզու ԳՖԴ-ն (մասնավորապես դրա դիսկուրսիվ լեզվական յուրահատկությունները) բավարար չափով ուսումնասիրված չէ, ապա դրա համակողմանի քննությունը լեզվական տարբեր մակարդակներում ոճագործառական-ճանաչողական առանձնահատկությունների համալիր ամբողջությամբ, խիստ արդիական է և անհրաժեշտ:

ԳՖԴ-ն լեզվական արտահայտության բոլոր մակարդակներում որպես բանական և երևակայական միավորների, հաղորդման և ներգործման գործառույթների հակադրամիասնությամբ ստեղծված խոսքի գործառական տարբերակ վերլուծելու փորձը **նորույթ** է, բարդ, հետաքրքրական և խոստումնալից: Սույն առենախոսության մեջ առաջին անգամ է, որ ԳՖԴ-ն դիտարկվում և հանգամանալից քննության է ենթարկվում որպես ուրույն, լեզվական միավորների յուրօրինակ հարաբերակցությամբ պայմանավորված «ճանաչողաերևակայական» գործառույթ իրացնող խոսքային դրսևորում: Նորույթ է նաև ԳՖԴ-ի և նրա գիտական և գեղարվեստական առնչությունների համեմատական քննությունը, լեզվառճական ներթափանցումների մանրակրկիտ ուսումնասիրությունը: Աշխատանքի նորույթը պայմանավորված է նաև հետազոտության համար ելակետային համարվող նոր մեթոդաբանությամբ. վերոնշյալ ինը մեթոդների մեծ մասը գիտաֆանտաստիկ դիսկուրսիվ վերլուծություններում կիրառվում է առաջին անգամ:

Այսօր անգլալեզու ԳՖԴ-ն առավել կարևոր է լեզվաբանների, բանասեր-հետազոտողների և դասավանդողների համար. ժամանակակից աշխարհում միջազգային շփումն անգլերենի միջոցով անխուսափելի է, առանց անգլերենի՝ անհնարին, և գիտաֆանտաստիկ դիսկուրսն արդեն աշխարհի բազմաթիվ համալսարաններում լեզվի ուսուցման դասընթացի, ինչպես նաև բակալավրիատի և մագիստրոսական մասնագիտական ծրագրերի անբաժանելի մաս է դարձել: Այս առումով սույն հետազոտությունը կարող է ունենալ որոշակի **գործնական արժեք**՝ ոչ միայն արդյունավետ կիրառություն գտնելով գործառական ոճագիտության և ճանաչողական ոճագիտության բնագավառների այլ հետազոտական աշխատանքներում, այլև անգլերեն լեզվի գործնական ուսուցման ոլորտում: Ուրիշ խոսքով՝ մշակված սկզբունքները կարող են նպաստել անգլերենի գերժամանակակից կիրառություններից մեկի՝ անգլալեզու ԳՖԴ-ի ընկալմանն ու մեկնաբանությանը, նաև դրանց ներմուծմանը լեզվի ուսուցման դասապրոցես:

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ԳՖԴ-ի լեզվական/արտալեզվական առանձնահատկությունները, դրանց ուսումնասիրության հետ կապված հիմնահարցերն ու խնդիրները: Հիմնավորվում են թեմայի և փաստական նյութի ընտրությունը, ուսումնասիրության առարկան, արդիականությունը և նորոպթը, մեթոդաբանական հիմքը, գործնական նշանակությունն ու տեսական արժեքը, որոշարկվում ուսումնասիրության նպատակներն ու տասնվեց խնդիրները:

Մտաջին գլուխը («Գիտաֆանտաստիկական որպես գրական դիսկուրս») բաղկացած է երեք ենթագլխից («Գիտաֆանտաստիկ գրական դիսկուրսի ծագումն ու զարգացումը, հիմնական թեմատիկ ուղղվածությունը», «Փոփոխության գաղափարն ու գաղափարախոսությունը գիտաֆանտաստիկ դիսկուրսում», «Գիտաֆանտաստիկ դիսկուրսի գործառական դասակարգումը»): Այս գլխում անդրադարձ է կատարվում ԳՖԴ-ի ձևավորմանն ու զարգացման փուլերին, գիտաֆանտաստիկ նախատիպերի դասական թեմատիկ շարքի առաջացմանը, ԳՖԴ-ի՝ որպես բանական և երևակայական ոճավորված լեզվական միավորներից կազմված և փոփոխության գաղափարախոսությամբ պայմանավորված գրական դիսկուրսի աստիճանական կանոնարկմանը, գործառական դասակարգմանը: Պատկերված աղյուսակը ներկայացնում է ԳՖԴ-ի զարգացման հիմնական ժամանակագրությունը, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ թեմատիկ և այլ առանձնահատկություններ:

Ժամ.	ուղղություն	թեմատիկա/նախատիպեր	առանձնահատկություններ
19դ.	Բուն ԳՖԴ	տարածամանակյա և տիեզերական ճամփորդու-թյուններ, ուտոպիա, այլմոլորակայիններ, սոցիալիզմ, կրոն	Սկսեցին կիրառվել նոր գիտաֆանտաստիկ հնարներ, կատարվեցին դիդակտիկ եզրահանգումներ, ձևավորվեց ամերիկյան գիտաֆանտաստիկան:
1926 - 1960	Ժամանակա-ից ԳՖԴ-ի. սկզբնավորում ու ոսկեդար	փոփոխություն, ժամանակ, տիեզերք, սոցիալական էվոլյուցիա, աղետներ, բռնատիրություն, արդյունաբերականացում,	Ժանրը բնորոշվեց <i>science fiction</i> տերմինով, առանձնացավ գեղարվեստական գրականության մյուս դրսևորումներից, ձևավորվեց


		գենետիկ մեքենայություններ	դիստոպիական վեպը:
1938 - 1960	Ժամանակակից ԳՖԴ, ոսկեդար	գիտական նվաճումներ, բռնատիրական կարգեր, կրոն, հոգևոր արժեքներ, սոցիալ-քաղաքական հասարակարգեր ու հարաբերություններ	Նարրատիվ ոճը դարձավ ավելի պատկերավոր, որոշ չափով մշակվեցին և կանտոնակարգվեցին գրական նորմերը, ժանրը մուտք գործեց ռադիո և կինոարդյունաբերություն:
1960 - 1980	Նոր ալիք կամ երկրորդ ոսկեդար	Ժամանակ, պատճառահետևանքային պարադոքսներ, հրեշավոր աշխարհների քննադատություն, տարօրինակ և միտիկական կրոններ, քաղաքական ինտրիգներ, փլուզվող էկոհամակարգեր, մարդաբանական բնույթի սոցիալ-կենսաբանական փոփոխություններ, գենդերային հասկացություններ, աշխարհի վերջ	Կարևորվեցին փոփոխության հասկացությունը, արտալեզվական ուղղվածությունն ու բանականի և երևակայականի հակադրամիասնությունը, ԳՖԴ-ն վերջնականորեն ձևավորվեց արպես գործառական-ոճական դրսևորում, որպես գեղարվեստական մյուս ժանրերին հավասար կարգավիճակ ունեցող դիսկուրս: Առաջացավ գիտաֆանտաստիկ գրականության ակադեմիական ուսումնասիրությունների ոլորտը:
1980 - ցայ-սօր 1990 - ցայ-սօր	Սայբերփանք Հետ-սայբերփանք	շրջակա միջավայր, բնական պաշարների սղություն, պարենային ճգնաժամ, կենսատեխնոլոգիա և նանոտեխնոլոգիա, համացանցի տեղեկատվական ընդլայնում, տիեզերական նոր նվաճումներ, կենսաբանական փոփոխություններ, արհեստածին էակներ	Համակարգչային տեխնիկայի զարգացման արդյունքում տեղի ունեցան ներլեզվական փոփոխություններ, ձևավորվեց սայբերփանքյան գաղափարախոսությունը, կատարելության հասցվեց նորալիքյան գիտաֆանտաստիկ լեզուն: Առաջացան սայբերփանքյան նոր, «ենթանթաժանրային» դրսևորումներ:

Այս զլխում փոփոխությունը ոչ միայն ներկայացվում է որպես ԳՖԴ-ի տեսական ձևակերպում ստացած էլակետային և հիմնարար գաղափարախոսություն և լեզուն ու ոճը պայմանավորող կարևորագույն արտալեզվական գործոն, այլև որպես հեղինակային ակնարկներում կամ հերոսների դատողություններում գործնականորեն արտացոլվող ոճական հնար և գիտաֆանտաստիկ նշույթ¹:

Անդրադառնալով ԳՖԴ-ի անգլերենի գործառական համակարգում գրված տեղին, պետք է նշել, որ չնայած ակնհայտ գիտական գոյաբանական հիմքին և իմացական հակումներին, այն, այնուամենայնիվ, խոսքի գործառական

¹Muradian, G. *The Concept of Change in Science Fiction Theory and Discourse.*//Journal of Global Research in Education and Social Science, Volume 4, Issue 4. Manchester (UK), West Bengal (India): International Knowledge Press, 2015, pp. 212-217.

դասակարգման աստիճանակարգային սանդղակում հանդես է գալիս գեղարվեստական ոճի մտահայեցական ենթաոճին պատկանող ժանրի, թերևս յուրօրինակ ժանրի կարգավիճակով, քանի որ կիրառում է «յուրահատուկ գեղարվեստական հնար՝ ներմուծում է անսովորի, գոյություն չունեցողի և նույնիսկ անհնարինի տարրեր»¹ և հետապնդում ընթերցողի զգացմունքների ու հույզերի վրա ներգործելու նպատակ: Մոցիալ-հասարակական և տեխնոլոգիական փոփոխություններն իրենց հերթին արտացոլվում են ԳՖԴ-ի ենթաժանրային համակարգում՝ առաջացնելով հետագա դասակարգման անհրաժեշտությամբ: Ստորև բերվող գծապատկերը ցույց է տալիս, որ ըստ որոշակի ոճագործառական և ճանաչողական առանձնահատկությունների, ԳՖԴ-ն դասակարգվում է որպես գեղարվեստական ոճի մտահայեցական ենթաոճին պատկանող գրական ժանր, որն իր հերթին բաղկացած է մի շարք առավել ակնհայտ և համակարգված գրական ենթաժանրերից:



¹ Стругацкий, А, Стругацкий, Б. *Давайте думать о будущем.*//Собрание сочинений, т. 11. Донецк: Сталкер, 2004, с. 306-310.

Երկրորդ գլուխը («Գիտություն և գիտաֆանտաստիկա») բաղկացած է երկու ենթագլխից՝ «Գիտաֆանտաստիկ դիսկուրսի գիտական առնչությունները» և «Փիլիսոփայական տեսական դրույթների խոսքային/լեզվաոճական դրսևորումները գիտաֆանտաստիկ դիսկուրսում», որոնցում դիտարկվում են ԳՖԴ-ի կարևորագույն «մեզատեքստ» համարվող գիտությունները՝ ֆիզիկան, մարդաբանությունը, սոցիոլոգիան և փիլիսոփայությունը:¹ Վերջիններս համարվում են ժանրի շարադրանքը պայմանավորող այն գործոնը, որով հիմնավորվում է ժանրի գոյությունն ու լեզվական միջոցների նպատակաուղղված ընտրությամբ պայմանավորված ոճագործառական իրացումը: Մարդկային երևակայությունը, ձևափոխելով, վերափոխելով, ընդլայնելով կամ նեղացնելով նշված գիտություններին բնորոշ այս կամ այն տեսությունը, հիմնադրությամբ կամ օրենքով՝ յուրօրինակ լեզվական արտահայտումների միջոցով ստեղծում է գիտաֆանտաստիկ աշխարհներում գործնականորեն կիրառվող տեխնոլոգիական միջոցներ, երևույթներ, հասկացություններ: Տվյալ գործընթացը, որը բնորոշվում է «արտարկում» գիտական տերմինով, համարվում է գիտաֆանտաստիկ գրականության մեջ կիրառվող կարևորագույն հնարներից մեկը, քանի որ իր մեջ ներառում է ժանրի հիմնաքարը՝ փոփոխության գաղափարը:² Ուրիշ խոսքով՝ գիտաֆանտաստիկ արտարկումների արդյունքում հայտնի գիտական փաստերն ու տեսությունները վերածվում են ապագային վերաբերող անիրական կանխատեսումների, որոնք գիտական չեն, բայց գիտական հիմք ունեն և գիտականի տպավորություն են թողնում: Արտարկման վերլուծության մեթոդի կիրառությամբ հնարավոր է սահմանազատել գիտական և գեղարվեստական, ճանաչողական և երևակայական գործընթացները: Արտարկման վերլուծությունը մեծապես նպաստում է արտարկման արդյունքում ստեղծված պատկերների ճիշտ ընկալմանը և հեշտացնում դրանց մեկնաբանությունը: Գիտական արտարկման ձևերից մեկը գծային արտարկումը, կարող է լավագույնս կիրառվել որպես փոխաբերության վերլուծության լեզվաբանական հնար:³ Քանի որ փոխաբերությամբ ներհատուկ համեմատություն է, այլ ոչ թե կատեգորիկ պնդում՝ այն կարող է հեշտությամբ հարմարվել գծային արտարկման $y = cx + a$ բանաձևին, որտեղ x -ը և y -ը համեմատության փոփոխական բևեռներն են, իսկ c - ն և a - ն՝ հաստատունները:

Քննենք նախադասության մակարդակում իրացվող հետևյալ արտարկումը.

¹ Goswami, A. & Goswami, M. *The Cosmic Dancers*. NY: Harper & Row, 1983; Attebery, B. *Strategies of Fantasy*. Bloomington, IN: Indiana University Press, 1992; Krauss, L. M. *Beyond Star Trek*. New York: Basic Books, 1997; Mellor, F. *Between Fact and Fiction: Demarcating Science from Non-science in Popular Physics Books*.//Social Studies of Science, N 33/4. London: SAGE, 2003, pp. 509-538; Kaku, M. *Physics of the Impossible: A Scientific Exploration into the World of Phasers, Force Fields, Teleportation, and Time Travel*. NY: Doubleday, 2008.

²Brezinski, C. and Redivo Zaglia, M. *Extrapolation Methods. Theory and Practice*. Amsterdam: North-Holland, 1991.


³ McGlone, M.S. *Conceptual Metaphors and Figurative Language Interpretation: Food for Thought?*//Journal of Memory and Language, N 35, Article No. 0029, Lafayette College, 1996; Sullivan, K. *The Linguistic Structure of Literary Metaphor*. Berkeley: University of California, 2007.

Night City was like a deranged experiment in social Darwinism, designed by a bored researcher who kept one thumb permanently on the fast-forward button.

(Gibson, *Neuromancer*: 6)

Նշված օրինակում հեղինակի հետաքրքրության առարկան ապագայի գիշերային քաղաքն է (*Night City*), որը, գեղարվեստական համեմատության (*like a deranged experiment*) միջոցով արտարկվելով, ներկայացվում է որպես համակարգչային դարաշրջանի *խելահեղ, անհավասարակշիռ գիտափորձ*: Նախադասության կառույցում *Night City* գործակիցը փոփոխական է այն առումով, որ վիրտուալ իրականությամբ ներծծված քաղաքը բնորոշելու համար հեղինակը կարող էր մեկ այլ լեզվական միավոր գործածել, օրինակ՝ քաղաքի իրական անունը կամ նույն կապակցությունը որոշյալ հոդով և փոքրատառերով և բնականաբար՝ հուզական ավելի թույլ լիցքավորվածությամբ: Համեմատության պարտադիր բաղադրիչը (*was like a deranged experiment*) հաստատուն է այն առումով, որ որպես տեխնոլոգիական մրցավազքի և գերտեխնոլոգիական դիստոպիական իրականության մաս ներկայացող հերոսի համար քաղաքի ուրիշը չէր կարող բնորոշվել այլ կերպ, քան *խելահեղ* կամ *խելազար*: Ընդ որում, հաստատունի ոճական ուժգնությունը կրկնապատկվել է *deranged experiment* մակդիրավոր կապակցության շնորհիվ և բազմապատկվել *in social Darwinism* փոփոխականի միջոցով, որից էլ մեծապես կախված է *y* փոփոխականի արժեքը, ինչպես նաև *c* հաստատունի հետագա արտարկումը: Փոփոխական միավորը նախադասության կառույցում այքի է ընկնում հասկացական լայն ընդգրկմամբ և իրացնում է ճանաչողական գործառույթ: Առանց սոցիալ դարվինիզմի գաղափարախոսության էությունն ըմբռնելու հնարավոր չէ մեկնաբանել հեղինակի՝ քաղաքի նկատմամբ ունեցած հաստատուն բացասական վերաբերմունքը: Այսպես՝ Ամերիկայում և Եվրոպայում 1870-ականներին առաջացած սոցիալ դարվինիզմի գաղափարախոսության կողմնակիցները գտնում են, որ դարվինյան էվոլյուցիայի և բնական ընտրության տեսության տրամաբանական շարունակությունը մարդկային հասարակությունից աղքատների ու թույլերի դուրս մղումն է, հարուստների և ուժեղների վերարտադրության ապահովումը: Այս տեսության անհեթեթության վերաբերյալ Գիբսոնի կարծիքը, ինչպես նաև *in social Darwinism* փոփոխականի արտարկումը վերջնականանում է *a* հաստատունի տիրույթում իրացվող փոխաբերության միջոցով՝ *designed by a bored researcher who kept one thumb permanently on the fast-forward button* (վերոնշյալ գաղափարախոսությունը *ստեղծվել է ձանձրացող հետազոտողի կողմից, որը պատրաստ է արագորեն մոռանալ այն*): Արտարկման պատկերն ավելի պարզ կլինի, եթե շարժվենք հակառակ ուղղությամբ՝ սկզբնաղբյուր տիրույթից դեպի թիրախ տիրույթը. ձանձրացող գիտնականի անլուրջ գաղափարախոսությունը (*a*), այն է՝ սոցիալ դարվինիզմի տեսությունը (*x*) բնորոշ խելացնոր գիտափորձով (*c*), ներկայացնում է ապագայի համակարգչայինացված քաղաքը (*y*): Ընդ որում *Night City* որոշյալի շարույթի *Night* գոյականական բաղադրիչն իր հերթին բացասական լրացուցիչ առնչանակային երանգ է հաղորդում ամբողջ ասույթին՝ ոչ միայն գիշեր է, այլև մթությունը, դաժանությունն ու խաբեությունն է տիրում խելակորույս այդ քաղաքում: Լայն առումով, համեմատության իմաստային տիրույթում առկա է երկու առարկա՝ խելահեղ

քաղաքը և սոցիալ դարվինիզմի ոչ պակաս խելագար տեսությունը: Եթե վերոնշյալ համեմատություն-արտարկումը ներկայացնենք գծապատկերով, այն կունենա հետևյալ տեսքը.



Թեև գիտաֆանտաստիկ լուրջ ստեղծագործությունների շարքն է դասվում բնագիտության վրա հիմնված այսպես կոչված ծանր գիտաֆանտաստիկան, այդուհանդերձ սոցիալական (փափուկ) գիտաֆանտաստիկան իր արտարկած այլմոլորակայիններով և ապագայի հասարակարգերով կարող է նույնքան լուրջ և տրամաբանական լինել, որքան գիտաֆանտաստիկայի տեխնոլոգիական նվաճումներն ու անձանոթ մոլորակները:¹ Հաջորդ օրինակում ներկայացված այլմոլորակայինների նկարագիրը լեզվական արտահայտություն ստացած երևակայության վառ դրսևորում է:

*And woke up to the shrill, repeating shouts of someone downstairs, **terrifyingly like war whoops from the ghosts of murdered red men: war whoops** rising from Jonah Trap's house **as if the prelude to a general massacre**. [...] We were midway down the steps and I could see two creatures in the parlor **as if they were lepers** hovering inside the mouth of a cave, **cerements for garments, mummy-cloth unwinding from their arms** – except that what I first saw as unwinding bandages were in reality the loose, **ribbonlike extensions of their incredibly long forearms. Each creature, behind its head, had a corona of bone or cartilage that extended its height and gave it an out-of-time, out-of-place regality.***

(Bishop, *Allegiances*: 116, 119)

Գեղարվեստական կրկնակի համեմատությամբ (*like war whoops, as if the prelude to a general massacre*), հարակրկնությամբ (*war whoops*), համեմատությունների ոճական ներուժն ինտեսիվացնող ներակա առնշայնականությամբ օժտված *-ly* գործուն վերջածանցով բառային շարույթով (*terrifyingly*) և որոշչային շարահյուսական շարույթով (*general massacre*) հագեցած ասույթը այլմոլորակայինների հետ հանդիպման արձագանքը ներկայացնում է որպես *սպանդի ենթարկվող հնդկացիների մահվան ճիշտ*, որպես *համընդհանուր ցեղասպանությանը նախորդող սահմոկեցուցիչ վայնասուն*: Գեղարվեստական մեկ այլ համեմատությամբ (*as if they were lepers*) այլմոլորակայինները պատկերվում են

¹ Westfahl, G. *Hard Science Fiction.//A Companion to Science Fiction*. Malden: Blackwell, 2008, pp. 187-199.

որպես *ձեռքերից կախված մահվան սավանները օդում ծածանող բորոտներ* (*cerements for garments, mummy-cloth unwinding from their arms*) բայց, ինչպես պարզվում է, քանդվող վիրակապեր հիշեցնող սավանները նրանց անհավատալիորեն *երկար, ժապավենանման վերին վերջույթների* մասն են կազմում (*loose, ribbonlike extensions of their incredibly long forearms*): Գործուն վերջածանցով կազմված *ribbonlike* առնշանակային բառային շարույթը և *incredibly long forearms* շարահյուսական շարույթը մեծ դրամատիզմ են հաղորդում կերպարների նկարագրությանը, որտեղ բարձրացող աստիճանավորումը հանգուցալուծվում է պատկերային վերջին մի մանրուքով՝ այլմոլորակային *էակների գլխի ետնամասից վեր է բարձրանում ոսկրային կամ կրճիկային շրջանաձև ելունդ, որը նրանց տարերկրային, տարածամանակյա արքայական տեսք է տալիս*: Հատվածը բառային արվեստին բնորոշ ներագման և գեղագիտական ուժի շնորհիվ գունագեղ մտագուգորդումներ և վառ մտապատկերներ է առաջացնում ընթերցողի մոտ:

Երրորդ գլուխը («Բանականի/գիտականի և երևակայականի/գեղարվեստականի հակադրամիասնությունը որպես գիտաֆանտաստիկ դիսկուրսի գոյաբանական հիմք») բաղկացած է չորս ենթագլխից: **Առաջին ենթագլխում** («Բանական-երևակայական հակադրամիասնության տեսական հիմքերը») փորձ է արվում տրամաբանականի և հուզականի դիալեկտիկան ներկայացնել որպես անգլալեզու գիտաֆանտաստիկային բնորոշ լեզվական միավորների՝ մի կողմից կանոնարկվածության ձգտելու, մյուս կողմից՝ հուզարտահայտչական-գնահատողական և գեղագիտական որակներ դրսևորելու հակադրամիասնություն: Հաղորդման/տեղեկատվական գործառույթի տրամաբանականությունն արտահայտվում է չեզոք լեզվական միավորների կրկնվող գործածությամբ: Հուզականությամբ (ներգործման գործառույթ), ընդհակառակը, կարևորվում են լեզվական միջոցների արտահայտչականությունը, փոխաբերականությունը, դարձվածայնությունը, կանոնարկված գործածության բացակայությունը:


Անվիճելի է, որ ԳՖԴ-ն «գրական ժանր է, որի անհրաժեշտ և բավարար նախապայմանը անիրականի և ճանաչողականի ներկայությունն ու փոխազդեցությունն է», որ ԳՖԴ-ն «աչքի է ընկնում գեղարվեստական նովումի [լատ. *novum* նորույթ] նարրատիվ գերակայությամբ, որն էլ իրացվում է ճանաչողական տրամաբանության միջոցով»,¹ որ «նովումի հասկացությունը ենթադրում է երևակայական աշխարհ՝ իրական աշխարհում»,² որ ԳՖԴ-ն «այլ ժանրերից առանձնացնող հատկանիշն այն է, որ գիտաֆանտաստիկայում անիրականը ճանաչողական է, այսինքն գիտականորեն հնարավոր է կամ ենթադրվում է, որ հնարավոր է»,³ որ անկախ այն բանից, թե «ինչ երևույթներ ու մտակոռահումներ են քննարկվում, անպայմանորեն պետք է հաշվի առնել որոշակի օբյեկտիվ, խիստ

¹ Suvin, D. *Radical Rhapsody and Romantic Recoil in the Age of Anticipation: A Chapter in the History of SF.*//Science Fiction Studies, Volume 1/4. Greencastle IN, DePaw University: SF-TH Inc, 1974:258: Suvin, D. R. *Metamorphoses of Science Fiction: On the Poetics and History of a Literary Genre.* New Haven and London: Yale University Press, 1979:8.

² Broderick, D.F. *Reading by Starlight: Postmodern Science Fiction.* London and NY: Routledge, 1995:35.

³ Fowler, B. *The Science of Fiction.*//New Humanist, Volume 116/1, London: RA, 2001:88.

գիտական առնչություններ՝ գիտական առումով կառավարելի միջավայրում»:¹ Այլ կերպ՝ սուվինյան ճանաչողական նորույթի շնորհիվ գիտաֆանտաստիկ գեղագիտականը չի կարող իրականությունից լիովին կտրված հանդես գալ. այն գործում և կայանում է բանականի և երևակայականի համաձույլ նորույթի՝ տրամաբանությամբ սահմանափակվող երևակայության շրջանակներում: Ավելացնենք ևս մեկ ձևակերպում՝ մենք գիտաֆանտաստիկական դիտարկում և քննության ենք առնում որպես ուրույն, լեզվական միավորների յուրօրինակ հարաբերակցությամբ պայմանավորված «ճանաչողաերևակայական» գործառույթ իրացնող խոսքային դրսևորում: Ընդ որում, «ճանաչողական երևակայությունը» ոչ միայն տվյալ ժանրը, այլև մեր տեխնոլոգիական-տեղեկատվական դարաշրջանի հասարակական և մշակութային փոփոխությունները բնորոշող հակադրամիասնություն է: Գծապատկերում ներկայացված է ճանաչողության և երևակայության նշված հակադրամիասնությունն ու համադրումը, փոխազդեցությունն ու միաձուլումը՝ ԳՖԴ-ի կայացման նախապայման հանդիսացող սուվինյան նովումը, մեր «ճանաչողական երևակայությունը», որը ոչ միայն նորույթ կամ բանականության ու երևակայության նոր տիպի փոխհարաբերություն է, այլև, ըստ Սուվինի՝ լեզվական թարմության, եզակիության և յուրօրինակության դրսևորում:²



ԳՖԴ-ի լեզվական նյութը քննելիս՝ երբեմն թվում է, թե գործ ունենք ոչ թե գիտական-գեղարվեստական համաձույլ դրսևորումների, այլ մի կողմից միայն հուզականորեն լիցքավորված լեզվական միավորների հետ, որոնք իրացնում են հզոր գեղագիտական գործառույթ, մյուս կողմից՝ զուտ տեղեկատվական գործառույթ իրացնող գիտական լեզվական հաղորդակցական տարրերի հետ, որոնք գիտական տեղեկատվության կրողներն են: Այսպիսի դեպքերում ընթերցողի՝ փոքրիկ

¹Jones, G. *Deconstructing the Starships: Science, Fiction and Reality*. Liverpool: Liverpool University Press, 1999:4.

² Suvin, D. R. *Metamorphoses of Science Fiction: On the Poetics and History of a Literary Genre*. New Haven and London: Yale University Press, 1979:9.

ակնարկներն ընկալելու ներզգացողությունը, ինչպես նաև տրամաբանական-վերլուծական մտածողությունն է հնարավորություն տալիս կռահելու, որ նյութը վերաբերում է ԳՖԴ-ին: Քննարկենք գիտական առումով «բևեռացված» թվացող մի օրինակ.

*Native **atheian** biochemistry developed quite parallel to the earth's, and the early colonists had no difficulty in introducing **terrestrial species**. Thus they enjoyed a friendly environment, where population soon grew sufficiently large to obviate the danger of racial change through **mutation** and/or **genetic drift**. Hence the modern **atheian** human is little different from his ancestors, on which account his **physiology and biochemistry** are known in detail.*

(Anderson, *The Dipteroid Phenomenon*, 1992:250)

Հատվածի գիտականությունն ու ճանաչողական գործառույթի իրացումն ապահովող միավորները (*biochemistry; terrestrial species; mutation; genetic drift; physiology and biochemistry*) վերաբերում են գենետիկ ճարտարագիտության ոլորտին: Ճշգրիտ տերմիններին զուգահեռ հեղինակն օգտագործել է անգլերենի բառակազմական նորմերին համապատասխանող, հորինված գիտական *dipteroid* (տես վերնագիրը) տերմինը և մարդաբանական *atheian* (*աթեալի*) ցեղանունը: Թեև հունարենի գոյականակերտ և ածականակերտ *-oid* վերջածանցով կազմված *dipteroid* նորաբառը ցույց է տալիս, որ գործ ունենք տերմինի հետ, այնուամենայնիվ միայն լայն համատեքստն է բացահայտում դրա նշանակությունը որպես գենետիկական թերություն, մինչդեռ *atheian* բառի լատինական ծագում ունեցող *-ian* գործուն վերջածանցն իր իմաստային ընդգրկմամբ անմիջապես մատնանշում է ազգային պատկանելություն ցույց տվող բառիմաստը: Զարմանալի է, բայց փաստ, որ ներկայանալով որպես տերմին, որը կարող է իրացվել միայն իմաստային մակարդակում, տվյալ երկու նորաբառերն էլ իրացվում են վերնշանային մակարդակում: Սա նշանակում է, որ եթե գիտաֆանտաստիկայում ճշգրիտ գիտական տերմինները միայն առնշանակային միավորների հետ կապակցություններում հանդես գալու դեպքում են իրացվում վերնշանային մակարդակում, ապա հորինված տերմիններն արդեն իսկ գոյաբանորեն հեղինակի երևակայության և բանականության միաձուլման արդյունք են, որի շնորհիվ էլ արդեն պատրաստի առնշանակային միավորներ են: Հենց նշված երկու հորինված տերմիններն են և գրագետ ու ուշադիր ընթերցողի համար նաև *quite parallel to the earth's* կապակցությունը, որը թույլ են տալիս կռահել, որ նշված հումինիդները բնակվում են վերերկրային տարածքներում, և երկրացիները գիտափորձեր են կատարում այդ մարդ-տեսակի ներկայացուցիչների վրա:

Հաջորդող օրինակը ցույց է տալիս, որ գեղագիտական հզոր լիցք ունեցող լեզվական նյութը, այնուամենայնիվ բուն գեղարվեստական ոճի շարադրանք չէ, քանի որ, ենթարկվելով գիտություն-«մեգատեքստի» պահանջներին, վերածվել է գիտաֆանտաստիկ շարադրանքի:

*This was a time of **crumbling realities**; I could not wait for the ninth hour to come round. Crouching in the windy street I opened my cart, readied my equipment and **sank like a diver into watchfulness**. My **amplified consciousness roared toward the stars**. **Godlike I roamed infinitely**. I felt the rush of the solar wind, but I was no Flier to be*

hurled to destruction by that pressure and I soared past it, beyond the reach of those angry particles of light, into the blackness at the edge of the sun's dominion.

(Silverberg, *Nightwings*, 1992:218)

Վառ պատկերավորությամբ այքի ընկնող վերոնշյալ հատվածը քաղված է Ռ. Միլվերբերգի *Nightwings* «Գիշերաթևեր» (երկու գոյականական արմատներից կազմված նորաբանություն) վիպակից, և կարծես ոճական հնարների ու գեղարվեստական արտահայտչամիջոցների շտեմարան լինի. *crumbling realities* (մակդիրային շարույթ), *sank like a diver into watchfulness* (գեղարվեստական համեմատություն), *My amplified consciousness roared toward the stars* (փոխաբերույթ), *Godlike I roamed infinitely* (բանադարձում-փոխաբերություն-չափազանցություն), *to be hurled to destruction* (շրջասություն), *soared* (առնշանակային միավոր), *angry particles* (մակդիրային շարույթ), *the blackness at the edge of the sun's dominion* (փոխաբերույթ): Եթե ավելի լայն համատեքստից չտեղեկանանք կամ իմաստային մակարդակում իրացվող *cart* և *equipment* բառային միավորներից, ինչպես նաև *Flier* հատուկ անուն-նորաբանությունից չկռահենք, որ հերոսը ոչ թե ինքնաթիռը վարելով վերևից հսկում է երկրի ու մարդկանց անդորրը, այլ միայն գենետիկ ճարտարագիտության արդյունքում ձեռք բերած իր մտահեռակառավարման ունակության (*amplified consciousness*) շնորհիվ է ճախրում (*soared*) օդում, ապա ամբողջ համատեքստը կհամարենք ընդլայնված փոխաբերույթ կամ ջոյայան գիտակցության հոսք: Մինչդեռ գործ ունենք գիտաֆանտաստիկ դիսկուրսի մի հատվածի հետ, որտեղ գիտականության զգացողությունն առկա է, բայց գրեթե աննշմար: Միլվերբերգի վերը նշված ստեղծագործության մեջ կան գրական անդրադարձի մի քանի հետաքրքիր նմուշներ, մասնավորապես մեր ժամանակի երեք հանրահայտ քաղաքների՝ ապագայում ներկայիս փառքից զրկված տարատեսակ անվանումները (*Roum* - Rome, *Jorslem* - Jerusalem, *Perris* - Paris), որոնք ոչ միայն հատուկ անուններ են, այլև գիտաֆանտաստիկ նշութավորված միավորներ:

Այսպիսով, գեղարվեստականության և գիտականության բնեռացումը, անգամ դրանց՝ որոշակի հատվածներում լիովին մեկուսի, թվացյալ անկախ գործածությունը նույնպես փաստում է այդ երկուսի պարտադիր ներգրավվածությունը գիտաֆանտաստիկ դիսկուրսում:

Երկրորդ ենթագլխում («Բանականության դերն ու նշանակությունը գիտաֆանտաստիկ դիսկուրսի գրական առնչություններում») քննվում է գիտաֆանտաստիկայի՝ այլ դիսկուրսների, մասնավորապես բուն գեղարվեստական արձակի, բուն ֆանտաստիկա ենթաժանրի, հեքիաթի ու առապելի հետ ունեցած հարաբերակցությունը: Եթե գեղարվեստական արձակը կարող է արտահայտվել ճանաչողական առումով ավելի «թույլ» ասույթներով, իսկ հուզական, հոգեբանական կամ միջանձնյա հարաբերությունների առումով չափազանց պատկերավոր ոճական դրսևորումներով և հզոր գեղագիտական ազդեցություն թողնել ընթերցողի վրա, ապա ԳՏԴ-ում ցանկացած այդպիսի արտահայտություն ավելի սերտ է առնչվում ճանաչողությանը և նույնիսկ զուտ, «մաքուր» գեղագիտական շարադրանքի հիմքում, նկատելի կամ աննկատ, առկա են մտածական տարրեր: Հուզական ռեակցիաները «մարսելուց» հետո ընթերցողի մոտ ձևավորվում է մտածական պատասխան-

ռեակցիան:¹ Բուն գեղարվեստական արձակի դեպքում մտածական պատասխանը կարող է և չհետևել, իսկ ԳՖԴ-ում այն պարտադիր պայման է: ԳՖԴ-ն տարբերվում է ավանդական գեղարվեստական արձակից ևս մեկ կարևոր առանձնահատկությամբ. այն կարող է արտահայտվել իրականությանն առնչվող, այսինքն տրամաբանորեն պատճառաբանված ցանկացած հորինվածքի ձևով, մինչդեռ ավանդական գեղարվեստական արձակը, որքան էլ պատկերավոր և փոխաբերական, չի կարող հայտնվել իրականությունից շեղվող որևէ այլ տարբերակով: Գեղարվեստական գրականությանը բնորոշ ցանկացած նախադասություն կարող է հայտնվել ԳՖԴ-ում, բայց հակառակը երբևիցե չի կարող պատահել:² Ասվածի ապացույցը *Գալակտիկ (Կաթնածիր կամ Օիր Կաթին)* կայսրության փլուզումը հուզական հզոր լիցքով (տես տառատեսակը) ազդարարող հետևյալ նախադասությունն է.

THE GALACTIC EMPIRE WAS FALLING.

(Asimov, *Foundation and Empire*, 1970:7)

Առանց *GALACTIC* ածականի *THE EMPIRE WAS FALLING* ասույթը կարող է հայտնվել ցանկացած գրական ստեղծագործության մեջ, ներառյալ ԳՖԴ-ն, բայց տվյալ ածականի հետ կիրառվելիս, այն վերածվում է ռճական նշույթի և կարող է կիրառվել միայն ԳՖԴ-ում, ավելին՝ մատնանշել, որ ստեղծագործությունը վերաբերելու է տիեզերքին և միջաստղային պատերազմներին:

Երբեմն ԳՖԴ-ն բնորոշվում է որպես ժամանակակից հեքիաթ, գիտական հեքիաթ կամ գիտական առասպել՝ նկատի ունենալով մարդկային վառ երևակայության վրա հիմնված համակարգային ընդհանրությունները, այնուհետև՝ ժանրին բնորոշ համամարդկային արժեքներին նվիրվածությունը, մարդասիրական և վերազգային, վերքաղաքական միտվածությունը, երբեմն նաև արքետիպային կամ կերպարային համընդհանրությունը (իմաստուններ, հրեշներ, վամպիրներ, կենդանիներ, թզուկներ, հսկաներ, տարաշխարհներ և այլն), հաճախ նաև երջանիկ ավարտով եզրափակումը: Հեքիաթային կամ առասպելական անդրադարձները դրսևորվում են ինչպես ԳՖԴ-ին բնորոշ լեզվական տարրերով, այնպես էլ հեքիաթային բառային կաղապարներով կամ առասպելական խորհրդանշական պատկերներով ու անվանումներով: Օրինակ, հեքիաթային կաղապարի ներմուծման օրինակ է ներքոնշյալ համատեքստը, որտեղ խախտելով ժամանակային և տարածական օրենքները՝ ապագայից անցյալի պատմության խորխորատներում հայտնված հերոսը ոչնչացումից փրկում է ինկերի քաղաքակրթությունը, *որից հետո բոլորն ապրում են երջանիկ կյանքով*:

*When the first Spaniards landed on their shores a few years later, they were slaughtered to the last man **and everyone lived happily ever after.***

(Kessel, *Invaders*, 1993:850)

¹ Artz, J. M. *The Role of Emotion in Reason and Its Implications for Computer Ethics.*//Newsletter, Volume 30/1. New York: ACM SIGCAS Computers and Society, 2000:15.

² Delany, S. R. *About 5750 Words.*//The Jewel-Hinged Jaw: Notes on the Language of Science Fiction. NY: Berkley, 1977, pp. 33-49.

Այդուհանդերձ, չնայած հեքիաթային, առասպելական, ֆանտաստիկ տարրերի առկայությանը, ԳՖԴ-ն լիովին տարբերվում է բուն ֆանտաստիկ ժանրերից, քանի որ թույլ չի տալիս իր խոսքային կառույց ներմուծել մետաֆիզիկական, գերբնական, կախարդական հրաշապատումներ, «հակաճանաչողական» լեզվական և արտալեզվական տարրեր:

Երրորդ ենթազվիում («Գիտական և գեղարվեստական լեզվաոճական փոխներթափանցումները որպես խոսքային իրողություն գիտաֆանտաստիկ դիսկուրսում») վերլուծվող բազմաթիվ և բազմազան օրինակները ոչ միայն ցույց են տալիս, որ ԳՖԴ-ի լեզվական կառույցը հիմնված է «գիտաբառերի և գեղարվեստական բառերի» հակադրամիասնության վրա, այլև փաստում, որ այն հիրավի «ճանաչողատերևակայական» գործառույթ իրացնող խոսքային դրսևորում է: Նշված գործառույթի իրացման կարևորագույն միջոց է գիտաֆանտաստիկ փոխաբերությունը/այլաբերությունը, որն ընդգրկում է տարատեսակ փոխաբերություններ ու այլ ոճական հնարներ և արտահայտչամիջոցներ: Գիտաֆանտաստիկ փոխաբերական խոսքի լավագույն օրինակներ են հետևյալ նմուշները. *a filthy trading community that curls its tentacles about the systems further; the lights in the sky were jewels on the nightcloak of the Mother of All; Sam Derby felt old, even up there where time was an ice cube; no shadowy lurking places for the clutch-fingered brain-washing ghosts of irrational past; reality to you is metal corridors, rooms without windows; Ruskinson swells, his head a bloodvessel just before aneurysm: Ձևիմաստի՝ որոշակի ձևերի նմանության ու համեմատության գաղափարն է ընկած նաև ԳՖԴ-ում կիրառության առումով փոխաբերությիև հաջորդող ոճական հնարում՝ փոխանվանական ու փոխաբերական գեղարվեստական համեմատություններում, որոնք նույնպես կարևոր ոճատարբերակիչ միավորներ են բանականի և երևակայականի հակադրամիասնության համատեքստում (օրինակ, Ֆ. Լայբերը իր 22 էջանոց պատմվածքում՝ *Gonna Roll the Bones*, 1992, ստեղծել է 49 համեմատություն): Առավել արտահայտիչ են տարբեր հեղինակների ստեղծագործություններից ընտրած հետևյալ նմուշները, որոնցից շատերը ոճական նշույթներ են և գեղագիտականից բացի իրացնում են նաև ակնհայտ ճանաչողական գործառույթ. *painting equipment comes out like a gift from the electronic gods; Accipiter's face is as smooth and unmoving as an alabaster carving of the falcon-god Horus, the blue-grey eye is like a pool at the bottom of a prediluvian pothole, laughing like a hynna in a tentful of nitrous oxide, he sits stiff, dark, and brooding as the diorite image of a Pharaoh's falcon; boats that ranged the watery dark like luxurious comets or like silver space-liners with dozens of jewel flamed jets; snow sifting down like confetti from our friends on the moon; an atmosphere silent and unwaked as Earth's long, prehuman day: Գիտաֆանտաստիկ մակդիրային կապակցությունները հիմնականում երկու տեսակի են՝ յուրօրինակ բազմակառույց որոշային և *of* նախդիրով կազմված շարույթներ, որոնք աչքի են ընկնում գեղագիտական անկրկնելի ազդեցությամբ (*a bottomless well of promise; white-gold distance; a veil of self; fate-haunted face; cruel hilarity; wine of sleep; scream of air; drugged sleep; catafalque of despair*): Այլաբերությունը, փոխաբերությից և համեմատությունից բացի, ԳՖԴ-ում արտահայտվում է նաև հետևյալ ոճական հնարների լայն կիրառությամբ՝**

անձնավորում (*lights close their tired eyes, my brain roared at me, the dying sun climbed painfully into the sky*), բառային հակադրություն (*helpless gods, singing statues, shadowy clarity, precarious security, grotesque beauty*), չափազանցություն (*It is a world the size of a handkerchief, a great ball of fire, brighter than a hundred suns together*), հեզվանք (*Does that young squirt in the general's uniform know about it?; Confucius didn't say that Lenin preserve us*), շրջասություն (*a little easy bodywarming as a prelude to sleep, But I was elsewhere, light-probing through my own grey matter*) և որոշչային հարադիր բարդություն (*colonist-most-likely-to succeed title; Jackie-Coogan-as-the-kid look*):


Նյութի քննությունը հաստատում է այն գաղափարի կենսունակությունը, որ գործառական նպատակաուղղվածությունը պայմանավորվում է նաև բառային շարույթներ և դրանցով կազմված բառակապակցական շարույթներ ներկայացնող ածանցավոր բառերի ընտրությամբ: Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ *-ly* գործուն վերջածանցով բառային շարույթներին, որոնց ոճական նշույթավորումը ԳՖԴ-ում հավանաբար կարելի է բացատրել այդ շարույթների ձևային առանձնահատկությամբ: Քանի որ ձևային փոփոխության-վերափոխության հասկացական մոդելների կառուցումը ժանրի հիմնարար հատկանիշն է, ապա բնական է, որ լեզվական համապատասխան միջոցների շարքում *-ly* վերջածանցով բառային շարույթները և դրանցով կազմված բառակապակցական կամ շարահյուսական շարույթները ոճատարբերակիչ դեր են ստանձնում: Հետևյալ գիտաֆանտաստիկ հատվածում *-ly* գործուն վերջածանցով շարույթների, գեղարվեստական համեմատությունների և մակդիրների քննությամբ բացահայտվում է դրանց ոճակազմիչ դերը ԳՖԴ-ում.

*The breezes were gentle, but **unusually** restless and variable tonight, **like leprechaun squalls**. Beyond the **drunken, white-washed cemetery fence** dim in the starlight, there rustled the **scraggly** trees of Cypress Hollow and made it seem **they were stroking their beards of Spanish moth**. Joe sensed that the ghosts were **as restless as the breezes**, uncertain where and whom to haunt, or whether to take the night off, drifting together in **sorrowfully lecherous companionship**. While among the trees the red-green **vampire lights** pulsed **faintly** and **irregularly**, **like sick fireflies** or **a plague-stricken space fleet**. The feeling of **deep misery** stuck Joe and deepened [...] but then he noticed a faint glow, **sick as the vampire lights** but more feverish, and with it a **jumping music**, tiny at first **as a jazz for jitterbugging ants**. He stepped along the **springy sidewalk**, wistfully remembering the days when **the spring was all in his own legs** and he'd bound into a fight **like a bobcat** or **a Martian sand-spider**. Gradually the **midget music** got raucous **as a bunnyhug for grizzly bears** and loud **as a polka for elephants** while the glow became a **riot of gas flares** and flambeaux and **corpse-blue mercury tubes** and **jiggling pink neon ones** that all **jeered at the stars** where the spaceships roved.*

(Leiber, *Gonna Roll the Bones*, 1992:141)

Հեղինակը գեղագիտական մեծ ուժով է նկարագրում գիշերային Իրոնումայն քաղաքի փողոցներից մեկը, որով քայլում է վիպակի հերոս Ջո Սլաթերմիլը և շտապում դեպի խաղատուն: 213 բառից կազմված վերասույթային միասնությունը պարունակում է *-ly* գործուն վերջածանցով յոթ բառային շարույթ. *unusually; scraggly; sorrowfully; faintly; irregularly; wistfully; gradually*. Համեմատության համար նշենք, որ

այս հատվածում գրեթե նույն քանակն են կազմում մնացած բոլոր կարգային ձևերը/բառային շարույթները միասին վերցված: Լայբերի քսաներկու էջանոց ստեղծագործության մեջ կիրառված կարգային ձևերի քանակական հարաբերակցությունը ներկայացնող գծապատկերն ավելի քան խոսուն է՝



Բառային շարույթներից ընտրել ենք այն տաս կարգային ձևերը, որոնք չորս կամ ավելի անգամ են կիրառվել նշված ստեղծագործության մեջ: Փոքրածավալ կորպուսային վերլուծությունը ցույց է տալիս, որ ԳՖՆ-ի այլ ստեղծագործություններում ոչ միայն *-ly* վերջածանցով, այլև մնացած բոլոր վերջածանցներով կազմված կարգային ձևերի քանակական պատկերը կարող է փոխվել, բայց *-ly* վերջածանցով շարույթների հետ ունեցած համամասնությունը էականորեն չի փոխվում, այսինքն վերջինս մշտապես քանակապես գերիշխում է բոլոր կարգային ձևերն առանձին վերցված և կազմում է դրանց (բոլոր կարգային ձևերը միասին վերցված) գրեթե կեսը: Գեղարվեստական համեմատությունները՝ թզուկի հետ համեմատվող քամին (*The breezes were [...] like leprechaun squalls*), անհանգիստ քամու հետ համեմատվող ուրվականները (*the ghosts were as restless as the breezes*), հազիվ թայրտացող ճանճի կամ ժանտախտափոր տիեզերանավատորմի հետ համեմատվող փողոցային լույսերը (*vampire lights pulsed faintly and irregularly, like sick fireflies or a plague-stricken space fleet*), որոնք առավել ոճավորված են դարձել *vampire lights` վամպիր-լույսեր* (անցորդներին անվերջ հետևելու պատճառով) մակդիրային կապակցության շնորհիվ, այդ լույսերի հետ համեմատվող մեկ այլ լույսի թույլ առկայծումը (*a faint glow, sick as the vampire lights*), ջազի տակ թռչկոտող մրջյունների հետ համեմատվող երաժշտությունը (*jumping music, tiny at first as a jazz for jitterbugging ants*), Ջոյի վայրի կատվի կամ մարսյան ավազասարդի ճկունության հետ համեմատվող մարտունակությունը (*he'd bound into a fight like a bobcat or a Martian sand-spider*), անբարեհունչ երաժշտության հետ համեմատվող մոխրագույն

արջերի ճագարանման գրկախառնումը (*the midget music got raucous as a bunnyhug for grizzly bears and loud as a polka for elephants*), երաժշտության աներևակայելի ուժգնությունը, որպիսին կհնչեցնեին, երբ փղերը պոլկա պարեին (*loud as a polka for elephants*), ոճավորված մակդիրային կապակցությունները (*drunken fence; lecherous companionship; vampire lights; deep misery; jumping music; springy sidewalk; midget music; riot of gas flares; corpse-blue mercury tubes; jiggling pink neon ones*), անձնավորում-փոխաբերությոը (*they were stroking their beards of Spanish moth*), իսկական փոխաբերությունները (*the spring was all in his own legs* և *jeered at the stars*) իրենց ոճական հնարավորություններն են իրացնում ոչ միայն վերնշնային մակարդակում՝ վիզուալ փոխաբերությի միջոցով նկարագրելով գիշերային փողոցն ու անցորդին, այլև վերվերնշնային մակարդակում ինչ-որ չարագուշակ շունչ են հաղորդում ամբողջ համատեքստին:

Այսպիսով, այս ենթագլխում քննարկված բոլոր ոճական արտահայտչամիջոցները նպաստում են «ճանաչողաերևակայական» գործառնությի իրացմանը: Ընդ որում, գեղագիտական ներգործման միջոցները, մշտապես համագոյակցելով գաղափարական-տեղեկատվական և սոցիալ-հասարակական բովանդակության հետ, իրացնում են նաև քարոզչական գործառնոյթ: Այս գործառնությի առկայությամբ է պայմանավորված գիտաֆանտաստիկ ժանրի համամարդկային էությունն ու համամարդկային արժեքների քարոզչության իրականացումը:

Չորրորդ ենթագլխում («Գիտաֆանտաստիկ նորաբանությունների ոճատարբերակիչ յուրահատկությունները») քննվում են նորաբանությունների ճանաչողական և հուզական որակները, բացահայտվում դրանց ոճատարբերակիչ էությունը, ներկայացվում դրանց իմաստա-կառուցվածքային խմբերը: Ինչպես ցույց է տալիս սույն հետազոտության շրջանակներում կատարված փաստական նյութի քննությունը, նորաբանությունների շարքում կարևոր տեղ են գրավում գիտաֆանտաստիկ տերմին-նորաբանությունները կամ ինչպես մենք ենք անվանել և դասակարգել որպես նորաբանությունների առաջին խումբ՝ **հորինված տերմին-նորաբանությունները (1)**, որոնք հիմնականում կազմվում են փոխառության, ածանցման, բառաբարդման, կրճատման, բառերի և տառերի ձևափոխման կամ տեղափոխման միջոցով: Շատ հորինված տերմին-նորաբանություններ կազմվում են հունարենին, լատիներենին, անգլերենին և երբեմն նաև այլ լեզուներին բնորոշ լեզվական տարրերի օգնությամբ, սակայն քիչ չեն դեպքերը, երբ գիտաֆանտաստիկ տերմին-նորաբանությունը չի ենթարկվում լեզվի բառակազմական և ոչ մի օրենքի: Ավելացնենք նաև տարատեսակ նշանների, զծիկների, գիտական սիմվոլների կիրառման լայն հնարավորությունը: Գիտական տերմինների իրացրած հիմնական գործառնություններին (էվրիստիկ՝ գիտելիքի տեսությանը վերաբերող, ճանաչողական, տեղեկատվական) գիտաֆանտաստիկայում ավելանում է ևս մեկը՝ ներգործման գործառնությոը, քանի որ, լինելով հեղինակի երևակայության արդյունք, լեզվական այդ միավորներն իրացվում են նաև վերնշնային մակարդակում: Սա նշանակում է, որ հորինված տերմին-նորաբանություններում էվրիստիկը, ճանաչողականը, տեղեկատվականը դրսևորվում են երևակայականի, պատկերավորի հետ միաձույլ՝ գիտաֆանտաստիկ տերմիններն ավելի բազմաբովանդակ ու գրավիչ դարձնելով թե՛

գիտական, թե՛ գեղարվեստական տեսանկյունից: Այդպիսի առնչանակային լեզվական միավորներ են հետևյալ տերմինները՝ *cyberpsychosis; bioroid; wetware; simstim construct; cryogenic system; catatonic schizophrenia, roboprobe, nikulturi; visicircuit, pagoda; microdiathesiology; poikilochronis; chronismologist; transpex; heat mills; glossopsychic; hyposubdeps*: Նորաբանությունների մյուս խումբը՝ **հատուկ անուն-նորաբանությունները (2)** նույնպես առնչանակային միավորներ ու ոճական նշույթներ են և ստեղծվում են անզլերենի բառակազմական նորմերին համապատասխան կամ անհամապատասխան, բարեհունչ կամ անբարեհունչ են, հեշտ կամ դժվար արտաբերվող, հաճախ նշույթավորվածությունից բացի որևէ այլ լրացուցիչ տեղեկություն չպարունակող, բայց այդուհանդերձ՝ իրենց պատկերավորության և անսովոր կառուցվածքի կամ հնչյունների հերթագայության շնորհիվ մշտապես ուշադրություն են գրավում: Եթե հատուկ անունների հնչողությունը, պատկերավորության աստիճանն ու ճանաչողական որակը պայմանավորված են հեղինակի գիտական (ներառյալ լեզվաբանական) և ստեղծագործական անհատականությամբ, ապա դրանց ընկալումը կախված է ընթերցողի գրագիտությունից, ինտելեկտից, լայնախոհությունից, ներքմբռնումից և մի շարք այլ ունակություններից (ներառյալ լեզվականը): Օրինակ, Վ. Նազարյանի «Միրո պատմություն» (2008) ստեղծագործության մեջ արևելյան սիրո աստծվածուհու անվան (*Sirume*) ճանաչողականությունը ոչ հայազգի ընթերցողի համար միայն արևելյան մտազուգորդումներն ու արևելյան հնչողությունն է, մինչդեռ հայազգի ընթերցողի համար դրա ճանաչողական արժեքը կրկնապատկվում է, երբ անունն ընկալվում է նաև որպես հայերեն «սիրում է» բայական կառույց: Մեծ է նաև Ու. Գիբսոնի (1986) հերոսի «Քեյս» (*Case*) անվան ճանաչողական արժեքը: Այն կապված է Քեյսի համակարգչային տեխնոլոգիական ունակությունների հետ՝ նրա մարմինը կարծես այն արկղն է կամ տուփը (*case*), որտեղ միաձուլվում են նրա միտքն ու վիրտուալ սայբերտարածքը: Անունը կարող է կապվել նաև հանցագործության հետ (*criminal case*), քանի որ Քեյսը հանցագործ-ցանցահեն է: Ստամբուլում Քեյսին առևանգող մարդը կրում է հայկական անուն: Այս, թվացյալ գիտաֆանտաստիկ *Terzibashjian* անունն ակնհայտորեն հայկական ազգանուն է, որի կրկնակի ճանաչողական արժեքը, ամենայն հավանականությամբ, ընկալում է հեղինակը և նաև տեղեկացված կամ հայազգի ընթերցողը: Հետաքրքրական են գիտաֆանտաստիկ մի ստեղծագործության մեջ (Smith, *Alpha Ralpa Boulevard*, 1993) *խկական մարդկանց (true persons)* հետ համագոյակցող երկու ազգային, դասային կամ գուցե ծագումնային համարվող խմբերն անվանող, բառակազմական և գիտական ճշգրտությամբ կազմված հատուկ անունները՝ *Homunculus* (հոգն. *Homunculi*) կամ *underpeople*՝ արարածներ, որոնք ծագում են կենդանիներից և *Hominid* (հոգն. *Hominids*) էակներ, որոնք եկել են աստղերից: Հատուկ անուն-նորաբանությունների մեջ կարևոր տեղ է գրավում համընդհանուր արհեստական արարածների դաս ներկայացնող իմաստային շարքը. «ռոբոտ», «անդրոիդ», «սիմուլակրում»: Վ. Չապեկի *robot*՝ արհեստական մարդ-մեխանիզմը հանրահայտ տերմին է, ուստի քննարկենք հաջորդող դասը, որի արտահայտիչ օրինակ է ոչ թե զուտ մեխանիկական, այլ հումանոիդ, այսինքն կենսաբանորեն մարդկային տեսք, երբեմն նաև զգացմունքներ ունեցող ռոբոտ-արարածին ներկայացնող *android* ինուն.

andro («մարդկային») + *eides* («ձև»)՝ գոյականը, որը ԳՖԴ-ում լայնորեն կիրառվում է 20-րդ դարի 70-ականներից սկսած մինչև այսօր: Բառի ծագումնաբանությունն, այդուհանդերձ, ցույց է տալիս, որ այն ստեղծվել է 13-րդ դարում՝ «արիեստական, մեխանիկական էակ» իմաստով: Այս իմաստն իհարկե պահպանվել է, բայց բառիմաստի ընդլայնման արդյունքում ավելացել են նոր իմաստներ («զգացմունք ունեցող ոռոտ», «համակարգչային ծրագրով գործող մարդակերպ կենսաբանական արարած», «համակարգչային ծրագիր», «բջջային հեռախոսների մոդել» և այլն) և կառուցվածքային նոր ձևեր (ինչպիսիք են *andy* և *droid* հապավում-նորաբանությունները): Ֆ. Դիքի *andy* նորաբառը «անդրոիդ» բառի կրճատ, փաղաքշական ձևն է, իսկ Ջ. Լուկասի *droid* գիտաֆանտաստիկ տերմինը կազմվել է *android*-ի առաջին արմատի վերջնամասի (*dro*) և երկրորդ արմատի սկզբնամասի (*id*) համակցման միջոցով: Գիտաֆանտաստիկ ոճական նշույթ է նաև լատիներեն *simulacrum* (հոգն. *simulacra*)՝ «նմանություն» բառը, որն իմաստային ընդլայնման արդյունքում վերածվել է արիեստական էակի կամ իրական մարդու կլոնը ներկայացնող նորաբանության: Արիեստական մեխանիկական կամ կենսաբանական արարածներին պատկերող նորաբանությունների իմաստային շարքում տեղ են գտել այնպիսի լեզվական միավորներ, ինչպիսիք են *automaton*, *replicant*, *neutrinis*, *cyborg*; *clone* ձևերը: Չափազանց հետաքրքրական է բրիտանացի գրող Բ. Ալդիսսի (2008) հայտնիացրած քիմիական պատերազմը վերապրած մարդկային քաղաքակրթությանը և դրա ներկայացուցիչներին տրված փոխանունություն-անվանումը՝ *Barefoot in the Head* – («Գլխից բոբիկ») համանուն վեպում: Ողջակիզման այս գոհերը ոչ միայն անունով, այլև իրենց էությանը ևս ներկայանում են որպես ջոյսյան իրականի, երևակայականի և մոճավանջայինի խորհրդանիշ: Բերենք ոճականորեն նշույթավորված գիտաֆանտաստիկ հատուկ անունների՝ անձնանունների, տեղանունների և ազգային կամ խմբային պատկանելություն ցույց տվող գոյականների օրինակներ, որոնք բոլորն իրացնում են տեղեկատվական, ներգործման և ճանաչողական գործառույթներ (մի մասը նաև լրացուցիչ կամ կրկնակի ճանաչողական գործառույթ), և որոնք բոլորն էլ աչքի են ընկնում անսովոր բառային, կառուցվածքային, հնչյունական, գեղագիտական կամ նույնիսկ հակազդեղագիտական որակներով.

●Անձնանուններ՝ *Ceran Swicegood*; *Gutboy Barrelhouse*; *Mazundar*; *Jacinth*; *Althea*; *Lathan Devers*; *Zilla*; *Kholmondeley*; *Shareem*; *Azdar*; *Vryhh*; *Khateyat*; *Myawo*; *Khas*; *Lyt Ahn*; *Wavyhill*; *F'lar*; *Stavin*; *Oglethorpe*; *Zeke Busby*; *Milligram Mulligan*; *Avluela*; *Phstuc My*; *Undskyld*; *Peerssa*; *C'mell*; *Na-Ma*, *Nahad Eri-Devi*; *Ludwig Euterpe Mahlzar* և այլն:

●Տեղանուններ՝ *Lunar Carpatians*; *Epsylon Lyrae*; *Lasthope*; *Neotrantor*; *Wichita*; *Fort Worth*; *Moosejaw*; *Cellan-Cedir*; *Globar*; *Schall*; *Epsylon Indi*; *Tau-Seti*; *Lalade 21485*; *Delta Cephei III*; *Whip Belt*; *Stone Crescent*; *Meadows of Blood*; *M'larfra*; *Aalborg*; *Tanakuatua*; *Diaspar*; *Lys*; *High Reaches*; *Pai Ting Place*; *Lhasa*; *Yteic-Os*; *Loris*; *Abyssinia*; *Afreek*; *Agupt*; *Eyrop*; *Ais*; *Stralia*; *Crosswhen*; *Wraithworld*; *Blackeneyworld*; *Kraken* և այլն:


●Ազգային, խմբային, դասային պատկանելություն ցույց տվող հատուկ անուններ՝ *Proavitoi*; *Weyr*; *Romanchi*; *Shemaqya*; *Bleshites*; *Mosynichii*; *Kopektans*; *Millmen*; *Runaways*; *Raskkans*; *Silvinooids*; *Petokii*; *Vulpekutans*; *Rohrs*; *Mawaanians*; *Euranoi*;

Aalaag; Ojibway; Fliers; Changelings; Fiia; Liuar; M'larfra; Neo-Amerinds; Meshuganas և այլն:

ԳՖԴ-ի արտարկումների շարքում կարևոր տեղ են գրավում լեզվական նոր կիրառությունները՝ **նորալեզու-նորաբանությունները (3)**, որոնք լեզվական այնպիսի նոր ձևեր ու կառույցներ են, որոնք բնորոշ են ոչ միայն տվյալ ստեղծագործության համընդհանուր հաղորդակցական գործընթացին, միևնույն ստեղծագործության շրջանակներում հանդես եկող կարևոր անհատ-կերպարների կամ փոքր խմբերի խոսքին, այլև կարող են կիրառվել ցանկացած հեղինակի կողմից, ցանկացած այլ ստեղծագործության մեջ (երբեմն նույնությամբ, երբեմն էլ՝ մի փոքր ձևափոխված): Դրանց ստեղծումը լեզվաբանական արտարկումների միջոցով՝ բանասիրական մեծ հմտություն է պահանջում: Ավելին՝ ընթերցողը ևս պետք է որոշակի պատրաստվածություն ունենա դրանք լիարժեք ընկալելու համար: Հանդես գալով իրական և հորինված տարրերի համակցումներով՝ գիտաֆանտաստիկ նորալեզուները կարող են պատկանել կամ այնպիսի տպավորություն թողնել, կարծես պատկանում են հին կամ միջին անգլերենին (*they ain' seen em befo; show thee what it is to fly; thou wouldst not understand; Why didst thou come?; Canst thou get back?*), շոտլանդերենին (*unco, a Scottish word meaning strange, uncanny, weird*), ֆրանսերենի, հնդկացիական, եգիպտական և այլ բնական լեզվի կամ դրա իմիտացիայի՝ երբեմն նաև լատիներեն *lapsus lingae* («սխալ խոսք») կոչվող տարրի հավելմամբ (*M'sieu, you will sit here?; in Hottentot go-go meant to examine, left open by the lapsus lingae of malingering sentinels*): Դրանք կարող են նաև զուտ լեզվախաղեր լինել (*they funnywalk; stop sillytalking; All who hadn't been lookseeing before; He began again, in the face of blank nonunderstanding*): Նորաբանությունների նշված երեք խմբերից բացի ԳՖԴ-ում առկա մնացած նորաբանությունները փոքրաթիվ մաս են կազմում և բոլորը միասին կարող են պայմանականորեն կոչվել այլ կամ **սեղայնացված նորաբանություններ (4)**: Այս խմբին պատկանող նորաբաները կիրառվում են միայն տվյալ ստեղծագործության շրջանակներում կամ բնորոշ են միայն տվյալ կերպարի կամ կերպարների խոսքին: Տեղայնացված նորաբանությունների ոճավորված կիրառության օրինակներ են հնչյունների երևակայական համակցման, իմաստային ընդլայնման, իրական բառերի նորաձև համակցման և ածանցման միջոցով կազմված հետևյալ լեզվական միավորները. *un-bird, un-machine nonhumor, dragonlore, ticket-fido, brain-drainers, organ-peddlers, fatherworld, worldlets, robowaiter, coil-father, lovedawn; biofact; visicall; schpritzer, noplace, kishkas, schlepping, yutzing; bodyburn; video-playback classroom; semaphorically; lucinatory*: ԳՖԴ-ին բնորոշ նորաբանությունները, հատկապես գիտատեխնոլոգիական ուղղվածություն ունեցող նորաբաները, որոնք առատորեն սփռված են ժանրին պատկանող ցանկացած ստեղծագործության մեջ, կարևոր դեր են կատարում ժամանակակից անգլերենի բառապաշարի հարստացման գործում:

Չորրորդ գլուխը («Փոխաբերության գործառական արժեքը գիտաֆանտաստիկ դիսկուրսում») բաղկացած է երկու ենթագլխից («Գիտաֆանտաստիկ փոխաբերությունը բանականի և երևակայականի փոխհարաբերության հարացույցում» և «Ապափոխաբերականացումը որպես խոսքի սուբյեկտիվ-օբյեկտիվ դրսևորման ձև և ոճատարբերակիչ հնար գիտաֆանտաստիկ դիսկուրսում»): Այս

գլխում քննվում են այն գիտաֆանտաստիկ փոխաբերությունները, որոնցում բանականության և երևակայության անբաժանելի միասնությունը ներկայանում է որպես փոխաբերական մտքերի (հասկացական փոխաբերությունների) և փոխաբերական հույզերի (երևակայական փոխաբերությունների) համատեղում՝ «փոխաբերական միաձուլում»:¹ Միաձուլման հենքը գիտա-տեխնոլոգիական, սոցիալ-հասարակական, պատմական և մշակութային փոփոխությունների ուղղակի անդրադարձը և մեր բնորոշմամբ գիտաֆանտաստիկ ժանրի համընդհանուր և առաջնային *Change is motion/movement*՝ «Փոփոխությունը շարժում է» հասկացական փոխաբերությամբ, արտացոլվում է փոփոխության (թիրախ) ու շարժման (սկզբնաղբյուր) հասկացություններին վերաբերող դրական և բացասական փոփոխություններ խորհրդանշող երկրորդային ենթափոխաբերություններում և աճանցյալ, երրորդային համարվող տարբերակներում, որոնք նույնպես այլ ենթափոխաբերությունների առաջացման հիմք կարող են դառնալ: Այդուսակում ներկայացված է առաջնային հասկացական փոխաբերության և դրա հետ աստիճանակարգային հարաբերակցության մեջ գտնվող ենթափոխաբերությունների տաքսոնոմիկ մոդելը.



Հետազոտությունը ցույց է տալիս, որ գիտաֆանտաստիկ հասկացական փոխաբերության կարճ, լակոնիկ ասությաները հզոր գեներատիվ ներուժի շնորհիվ ստեղծվում են նոր, վերհասկացական տիրույթներ՝ առաջացնելով տարատեսակ պատկերային զուգորդումներ և վերաձվելով բարդ երևակայական փոխաբերությունների, որոնք պատկերավոր արտահայտչամիջոցների (երբեմն

¹ Muradian, G. *Metaphoric Blending in Science Fiction*.//Kalbu Studijos: Studies About Languages, N22, International Scientific Journal. Lithuania: Kaunas University of Technology, 2013, pp. 98-104; Muradian, G. *The Conceptual Metaphor Change is Motion and its Extension in Science Fiction*.//Journal of Global Research in Education and Social Science, Volume 7, Issue 2. Manchester (UK), West Bengal (India): International Knowledge Press, 2016, pp. 121-126.

նույնիսկ քերականական և իմաստային անոմալիաների և շեղումների) համադրման շնորհիվ նպաստում են նոր բացահայտումներ կատարելու գործընթացին:

Դիտարկենք *Scientific/technological change is destruction* հասկացական փոխաբերության հենքի վրա կառուցված երևակայական փոխաբերությունների համաձույլ մի նմուշ:

Gigantic. The words immense, monstrous, grotesque, massive, swollen, overpowering, beyond description. There on a mound rising above us, a bird of winds heaved with its own irregular breathing, its snake neck arching up into the gloom beneath the North Pole, supporting a head as large as a Tudor mansion; a beak that opened as slowly as the jaws of the most monstrous crocodile ever conceived, sensuously; ridges of tufted flesh puckered about two evil eyes, as cold as the view down into a glacial crevasse, ice blue and somehow moving liquidly; it heaved once more, and lifted its great sweat-coloured wings in a movement that was certainly a shrug.

(Ellison, *I Have no Mouth, and I Must Scream*, 1973: 173)

Համատեքստը սկսվում է գիտակցության հոսք հիշեցնող, քերականորեն անհամատեղելի բառային թվարկմամբ, որի բարձրացող աստիճանավորման վերին մակարդակը *beyond description* (*աննկարագրելի*) շարության է: Այս ասության անուղղակի փոխաբերությամբ է, որը *gigantic, immense, monstrous, grotesque, massive, swollen, overpowering* ածականների միջոցով նկարագրում է մարդկության համար մահաբեր էլեկտրոնային թռչնին: Վերոնշյալ նկարագիրն ամբողջականացնող բազմաբառ նախադասությունը (շուրջ հարյուր բառամիավոր) ընդլայնված փոխաբերությամբ է, որի կառույցն ընդգրկում է հաջորդական փոխաբերական ասություններ՝ *a bird of winds* (գործուն փոխաբերությամբ), *its snake neck arching up into the gloom* (գործուն փոխաբերությամբ), *a head as large as a Tudor mansion* (փոխանվանական համեմատություն), *a beak that opened as slowly as the jaws of the most monstrous crocodile ever conceived* (փոխանվանական համեմատություն), *as cold as the view down into a glacial crevasse* (փոխաբերական համեմատություն), *lifted its great sweat-coloured wings in a movement that was certainly a shrug* (բարդ փոխաբերությամբ): *Sweat-coloured wings, Evil eyes* և *ice blue* մակդիրային կապակցությունները կարող են դիտարկվել որպես նման փոխաբերություններ, որոնց ընդհանրությունը, հիմնված լինելով հասցեատիրոջ և հասցեագրի կենսափորձի վրա, հեշտ ընկալելի է: Ոչնչացման գաղափարն ավելի ցայտուն է դրսևորվում պատմվածքի վերնագրում՝ *I Have no Mouth, and I Must Scream* («Ես բերան չունեմ, բայց պետք է ճչամ»), որն ամբողջ պատմվածքը պարուրող ընդլայնված փոխաբերությամբ լինելուց բացի, նաև իմաստային անոմալիայի վրա հիմնված տարբերությունակիր փոխաբերությամբ է: Անկանոնությունը հիմնված է բերան չունենալու և ճչալու անհամատեղելիության վրա, բայց լայն համատեքստը, ներգագնողությունն ու ներըմբռնումը օգնում են ընթերցողին գնահատել փոխաբերությամբ և մեկնաբանել միայնակ հերոսի հուզաշխարհի առանձնահատկությունները:

Անդրադառնալով ապափոխաբերականացմանը՝ նշենք, որ այն սուբյեկտիվ կամ երևակայության օբյեկտիվացման գործընթացն է, որի արդյունքը ուղղակի փոխաբերություն է՝ գիտաֆանտաստիկ դիսկուրսի ցուցիչ կամ ոճա-ժանրային նշույթ

համարվող այն հնարը, որը գրեթե չի կիրառվում գրական-գեղարվեստական այլ դրսևորումներում:

June's body is a tracery of lambent lines, like some arcane capillary circuitry in the core of Mao/Kung Fu-tzu. Following the current craze, she has had a subdermal pattern of microchannels implanted. The channels are filled with synthetic luciferase, the biochemical responsible for the glow of fireflies, which she can trigger now at will. In the afterglow of lovemaking, she has set herself alight. [...] Slowly June will her glowing body dark.

(Di Filippo, *Stone Lives*, 1986: 194)

Համատեքստը ներկայացնող վերասույթային միասնությունը բարդ է, ճկուն, ոճային, անուղղակի ակնարկներով ու դժվարըմբռնելի փոխաբերական գաղտնաբառերով հարուստ: Առաջին նախադասության արևելյան հնչողություն ունեցող հարադիր բառաբարդումը (*Mao/Kung Fu-tzu*) Ջունի արևելյան ծագումն ակնարկող հատուկ անուն է: Երկրորդ նախադասությունը նույնպես գիտաֆանտաստիկ որևէ ոճաժանրային նշույթ չի պարունակում՝ անոթային պլաստիկ իմպլանտացիան տարածված և նորաձև է մերօրյա բժշկագիտության մեջ: Տվյալ ասույթը նախորդում է գիտաֆանտաստիկ *luciferase* (այսպես կոչված *լուսատիտիկային նյութ*) տերմին-նորաբանությանը և *she can trigger now at will* (*կարող է միացնել, երբ կամենա*) ուղղակի փոխաբերությանը: *Trigger* բայը կիրառված է արտառոց, անսպասելի, անսովոր առնչանակային իմաստով, քանի որ վերաբերում է մարմնի լուսավորության համակարգը «միացնել-անջատելուն»: Վերասույթային միասնության բարձրացող աստիճանավորումն ավարտվում է ևս երկու ուղղակի փոխաբերությոներով՝ *մարմնի լույսերը վառելով* (*she has set herself alight*) և ապա՝ *անջատելով* (*June wills her glowing body dark*): Ռեալիստական գրական համատեքստում դրանք կգործառնվեն որպես սեր և կիրք խորհրդանշող մտագուգորդումներ առաջացնող երևակայական փոխաբերություններ:

Գիտաֆանտաստիկ ուղղակի փոխաբերությունների (*one of these days I might be going to the stars; He thought at me, not bothering with words, ex-person; fixed sun; I am not here in the flesh; the created and the born; he had lived something less than half his allotted time-years*) իմաստային բոլոր նրբերանգները թեև բացահայտվում են միայն լայն համատեքստում, այնուամենայնիվ, նույնիսկ համատեքստից դուրս ժամանակակից ընթերցողը կարող է ընկալել դրանք որպես գիտաֆանտաստիկ ոճական նշույթներ՝ ապափոխաբերականացված կամ ուղղակի փոխաբերություններ: Կառուցվածքային առումով ուղղակի փոխաբերությունները բազմազան են (վերասույթային միասնություն, ասույթ-նախադասություն, բառակապակցություն, բառային և շարահյուսական շարույթ, տարատեսակ այլ պարզ և բարդ կառույցներ): Իմաստային և թեմատիկ առումներով ուղղակի փոխաբերությունները սահմանափակ են, քանի որ հիմնականում ապափոխաբերականացվում, օբյեկտիվ են դառնում գիտատեխնոլոգիական մտքի և երևակայության թռիչքներ պատկերող սուբյեկտիվ փոխաբերությունները:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները.

- ԳՖԴ-ի համար ելակետային համարվող գիտափիլիսոփայական տեսությունների, հասկացությունների, դրույթների ուղղակի արտացոլումը դիսկուրսում կարևոր տեղ է գրավում ոճատարբերակիչ առանձնահատկությունների շարքում:
- ԳՖԴ-ի ոճագործառական և ոճաճանաչողական վերլուծությունը լեզվաբանական տարատեսակ մեթոդների կիրառմամբ, ցույց է տալիս, որ ԳՖԴ-ն չի կարող կայանալ առանց բանականի՝ գիտական և փաստական տեղեկատվության, ինչպես նաև առանց իրական և պատճառափաստանքային ճշգրիտ կապերով աչքի ընկնող խոսքային պատկերներ ու իրադրություններ ծնող երևակայական տարրի:
- ԳՖԴ-ի գիտական տարրը արտացոլվում է գիտական արտաբերումներում, որոնք դրսևորվում են գիտական դրույթների, տեսությունների և հասկացությունների վրա հիմնված մարդկային մտքի և երևակայության միաձուլվելով լեզվաոճական հնարներով:
- Լեզվական տարաբնույթ միավորները ԳՖԴ-ում իրացնում են հաղորդման, ճանաչողական, էվրիստիկ, սոցիալական, համոզման, ներգործման գործառույթներ, լայն առումով՝ մեր բնորոշմամբ «ճանաչողաերևակայական» գործառույթ:
- Բանական կաղապարում պարփակված գիտաֆանտաստիկ վառ երևակայությունը դրսևորվում է լեզվաոճական և ճանաչողական արտալեզվական և ներլեզվական յուրահատկությունները պայմանավորող համընդհանուր փոխաբերականացման բազմաթիվ միջոցներով՝ փոխաբերույթներով, համեմատություններով, անձնավորմամբ, բարձրացող աստիճանավորմամբ, բառային հակադրություններով, չափազանցությամբ, հեզմանքով, շրջասությամբ, որոշչային հարադիր բարդություններով, մակդիրային կապակցություններով, -յ գործուն վերջածանցով բառային շարույթներով, ինչպես նաև տարատեսակ գիտաֆանտաստիկ նորաբանություններով:
- ԳՖԴ-ն հատկապես աչքի է ընկնում տարատեսակ փոխաբերույթների (ընդլայնված, բարդ, իսկական, գործուն, անուղղակի, տարբերութենակիր, բացարձակ, հասկացական և այլն) և գեղարվեստական համեմատությունների լայն կիրառությամբ:
- Գիտաֆանտաստիկ փոխաբերությունում բանականության և երևակայության անբաժանելի միասնությունը ներկայանում է որպես փոխաբերական մտքերի (հասկացական փոխաբերությունների) և փոխաբերական հույզերի (երևակայական փոխաբերությունների) համատեղում, որպես «փոխաբերական միաձուլում»:
- Գիտաֆանտաստիկ փոխաբերույթի հետագոտությունը փաստում է, որ փոխաբերույթը որպես և՛ լեզվական, և՛ ճանաչողական երևույթ դիտարկելը թույլ է տալիս «փոխաբերական միաձուլումը» բնորոշել որպես զոյաբանորեն ներակա փոխաբերականությամբ օժտված հասկացական փոխաբերույթի հիմքի վրա կառուցված երևակայական փոխաբերույթ:
- «Փոխաբերական միաձուլման» իրացման բնորոշ օրինակներ են ԳՖԴ-ի համընդհանուր փոփոխության գաղափարը կրող հասկացական փոխաբերույթի (*Change is motion*) և դրանից ածանցվող ենթափոխաբերույթների հիմքի վրա ստեղծված գիտաֆանտաստիկ երևակայական փոխաբերույթները:
- Ապափոխաբերականացման արդյունքում առաջացած ուղղակի փոխաբերույթը ԳՖԴ-ի ոճաճանրային նշույթ է և կարևորում է ԳՖԴ-ի ժանրային եզակիությունը:

●Մակդիրային կապակցությունները, որոնք աչքի են ընկնում կիրառելիության մեծ հաճախականությամբ և ընթերցողի վրա թողած գեղագիտական անկրկնելի ազդեցությամբ՝ նույնպես կարևոր ոճատարբերակիչ միավորներ են ԳՖԴ-ի բանական–երևակայական հակադրամիասնության համատեքստում:

●ԳՖԴ-ում քանակապես և կիրառման հաճախականությամբ *-ly* գործուն վերջածանցով բառային շարույթները գերազանցում են մյուս կարգային ձևերն առանձին վերցրած և կազմում մեծ քանակությամբ կադապարային ու առնչանակային բառակապակցական շարույթներ, որոնք էլ ոճատարբերակիչ դեր են ստանձնում:

●Գիտաֆանտաստիկ նորաբանությունները, որոնք կազմվում են հունա–լատինական տարրերի, անգլերենին և երբեմն նաև այլ լեզուներին բնորոշ լեզվական միավորների օգնությամբ (կարող են նաև բառակազմական և ոչ մի օրենքի չենթարկվել)՝ հորինված լեզվական տարրեր լինելու շնորհիվ վերածվում են գոյաբանորեն իսկ բանականն ու երևակայականը ներառող գիտաֆանտաստիկ ոճական նշույթների:

●ԳՖԴ-ի տեսական և գործնական ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել այս ժանրի՝ լեզվի միջոցով իրացվող դիսկուրսիվ ոճագործառական առանձնահատկությունները, ներառյալ մարդկային մտքի ճանաչողական և հուզական այն խոսքային դրսևորումները, որոնք արտահայտում են տեղեկատվական մեր դարաշրջանի գիտա-տեխնոլոգիական և սոցիալ-հասարակական փոփոխությունները:

Ուսումնասիրության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ **հրապարակումներում** (հոդվածներ, միջազգային գիտաժողովների թեզիսներ)՝

1. *Some Notes on the Style of Science Fiction*. // *Կանթեղ* գիտական հոդվածների ժողովածու, 4/41, Երևան: Ասողիկ, 2009, էջ 161-168:
2. *Գիտականն ու գեղարվեստականը, բանականն ու երևակայականը անգլերեն գիտաֆանտաստիկ գրականության ոճում*: // Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր: Վանաձոր: Իրավունք, 2009, էջ 133-138: (համահեղինակ՝ Ն. Գասպարյան)
3. *Գիտաֆանտաստիկ գրականության թարգմանությունը որպես հասարակական անհրաժեշտություն*: / Թարգմանության տեսական և գործնական հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան: ԵՊՀ, 2011, էջ 69-74:
4. *Literality of Metaphor in Science Fiction*. // *Armenian Folia Anglistika*, 1(8), *International Journal of English Studies*. Yerevan: Lusakn, 2011, pp. 54-58.
5. *Metaphoric Blending in Science Fiction*. // *Studies about Languages*. *International Scientific Journal*, No 22. Lithuania, Kaunas: Kaunas University of Technology, 2013, pp. 98-104.
6. *Իմացական և երևակայական փոխաբերությունների թարգմանությունը գիտագեղարվեստական գրականության մեջ*: / Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց, գիտական հոդվածների ժողովածու, Երևան: ԵՊՀ, 2014, էջ 40-44:

7. *On Some Stylistic Peculiarities of Science Fiction.* // Armenian Folia Anglistika, 1 (13), International Journal of English Studies. Yerevan: Lusakn, 2015, pp. 27-36.
8. *The Immortality Concept in Roger Zelazny's "Jack of Shadows."* // Folia Linguistica et Litteraria: Journal of Language and Literary Studies, N10. Univerzitet Crne Gore, Niksic, Montenegro: ITP Kolo, 2015, pp. 165-179.
9. *The Concept of Change in Science Fiction Theory and Discourse.* // Journal of Global Research in Education and Social Science, Volume 4, Issue 4. Manchester (UK), West Bengal (India): International Knowledge Press, 2015, pp. 212-217.
10. *Analytical Framework of Extrapolation and Metaphor in William Gibson's "Neuromancer."* // Studies about Languages, N 27, International Scientific Journal, Lithuania: Kaunas University of Technology, 2015, pp. 69-77. (co-author L. Mardoyan)
11. *Փոփոխության գաղափարախոսությունը գիտաֆանտաստիկ դիսկուրսում:* // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, գիտական աշխատությունների ժողովածու, 1-2 (20), Երևան: ԵՊՀ, 2016, էջ 150-157:
12. *Ռեյ Բրեդբերիի «451 աստիճան ըստ ֆարենհայթի» վեպի որոշ լեզվաբանական առանձնահատկությունների մասին:* // Կանթեղ գիտական հոդվածներ, 2/67, Երևան: Ասողիկ, 2016, էջ 74-81: (համահեղինակ Ն. Թումանյան)
13. *Սնգլո-ամերիկյան գիտաֆանտաստիկ դիսկուրսի ծագումն ու զարգացումը, հիմնական թեմատիկան:* / Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, գիտական հոդվածների ժողովածու, 7, Երևան: Լուսակն, 2016, էջ 30-37:
14. *The Conceptual Metaphor Change is Motion and its Extension in Science Fiction.* Journal of Global Research in Education and Social Science, Volume 7, Issue 2, Manchester (UK), West Bengal (India): International Knowledge Press, 2016, pp. 121-126.
15. *Imagery in Action: G. Orwell's "Animal Farm."* // Armenian Folia Anglistika, 1 (15), International Journal of English Studies. Yerevan: YSU, 2016, pp. 17-26.
16. *Գիտաֆանտաստիկ փոխաբերության ճանաչողաբանական առանձնահատկությունները:* // Ասողիկ հոդվածաշար, N27, Երևան: Ս. Պարթև, 2016, էջ 134-146:
17. *Գիտաֆանտաստիկ դիսկուրսի գործառական դասակարգումը:* // Կանթեղ գիտական հոդվածներ, 4/69, Երևան: Ասողիկ, 2016, էջ 73-80:
18. *The Abuse and Misuse of the English Word in G. Orwell's Dystopian Novel "Nineteen Eighty-Four."* // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, գիտական աշխատությունների ժողովածու, 1-2 (22), Երևան: ԵՊՀ, 2017, էջ 34-40:
19. *Փիլիսոփայական դրույթների խոսքային դրսևորումները գիտաֆանտաստիկ դիսկուրսում:* // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, գիտական հոդվածների ժողովածու, 8, Երևան: Լուսակն, 2017, էջ 4-13:

20. *Արտարկումը որպես ոճական հնար գիտաֆանտաստիկ դիսկուրսում: //* Լրաբեր հասարակական գիտությունների, 1 (649), Երևան: ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, 2017, էջ 201-206:
21. *Ֆիզիկական որպես գիտաֆանտաստիկ դիսկուրսի մեգատեքստ: // Կանթեղ* գիտական հոդվածներ, 2/71, Երևան: Ասողիկ, 2017, էջ 99-104:
22. *Գիտաֆանտաստիկ դիսկուրսի սոցիոլոգիական առնչությունները: //* Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, գիտական աշխատությունների ժողովածու, 1-2 (22), Երևան: ԵՊՀ, 2017, էջ 142-149:
23. *Fact and Fiction in Ray Bradbury's Fahrenheit 451: //* Cognition, Communication and Discourse, International Journal, N 14, Kharkiv: V. N. Karazin Kharkiv National University, 2017, pp. 86-92.
24. *The Immortality/Life-Death Concept in Roger Zelazny's "Jack of Shadows."* ESSE 10 International Conference of European Society for the Study of English. ESSE 10 Conference Program. Italy, Turin: Tipografia Testa-Torino, 2010, p. 35.
25. *Metaphoric Representation in Science Fiction.* Language, Literature and Art in Cross-Cultural Contexts. ESSE Armenia III International Conference Abstracts. Yerevan: YSU Press, 2011, p. 108.
26. *Metaphoric Blending: Convergence of Concepts and Images.* ESSE 11 International Conference of European Society for the Study of English. ESSE 11 Program Book. Turkey, Istanbul: Bogazici UP, 2012, p. 144.
27. *The Cognitive Stylistic Aspect of Ray Bradbury's Fahrenheit 451: Modern Linguistics in the Light of Interdisciplinarity.* ESSE Armenia IV International Conference Abstracts. Yerevan: YSU Press, 2016, p. 85.
28. *In Favour of Science Fiction.* Foreign Languages and Literature (theory and practice). International Conference Programme and Abstracts. Yerevan: YSU, 2009, p. 58. (co-author N. Gasparian)

GAIANE MURADIAN

The Linguostylistic Peculiarities of English Science Fiction Discourse in the Context of Convergence of the Rational and the Imaginative

The **object of the study** in the present research is science fiction – the discourse based on technological and social extralinguistic factors, and the literary genre built on the juxtaposition and interrelation of factitious and fictitious, cognitive and imaginative linguistic units realizing their functional goals in communication.

The **factive material** analysed in the light of convergence of concepts and images, includes science fiction stories and novels created during the New Wave (1960-1980) and Cyberpunk/Postcyberpunk (1980 to date) periods of the development of the genre.

The **topicality** of the research is conditioned by the key role science fiction plays today in the creation of new forms of global communication, development of English language, cultural and information exchanges, formation of new social attitudes, propagation of universal values.

The **novelty** refers to viewing and investigating science fiction as an original discourse realizing a “cognitive-imaginative” function through a specific choice of linguistic elements.

In addition to presenting science fiction as an authentic material of linguistic research within the frames of functional and cognitive linguistics, the research **aims** at revealing the communicative intention of the genre through those linguistic units, which contribute to the formation of a discourse variety which both informs and impacts the reader. To realize the mentioned aim, we have focused on **objectives** which refer to presenting the origin and the development, the functional classification, the extralinguistic bases of the genre and the linguistic means realizing a “cognitive-imaginative” function; to revealing linguostylistic and cognitive specificities of physical, anthropological, social, philosophical science fiction; to investigating the linguistic and extralinguistic relation of science fiction to other literary genres; to studying science fiction tropes, expressive means and neologisms in the light of convergence of concepts and images; to presenting science fiction metaphor as a product of “metaphorical blending;” to forming the taxonomic model of the primary science fiction conceptual metaphor *Change is motion* and its extended submetaphors; to discussing literalization of metaphor as a unique stylistic device. To realize the mentioned objectives, the following **methods** have been applied: the method of qualitative and quantitative analysis, the methods of linguostylistic and linguopoetic analysis, the method of qualitative and quantitative stylistic analysis, the case study method, the method of extrapolative analysis and linear extrapolation method, the statistical method, the method of conceptual metaphor identification and analysis, the taxonomic method.

From the **theoretical perspective**, the results of the study are, undoubtedly, of great importance as they clarify the functional and cognitive character, the linguistic and stylistic qualities of science fiction discourse, thus greatly contributing to the development of new attitudes to linguistic analysis of speech in general and the functional and cognitive stylistics in particular. The adequate perception and interpretation of the problem under study, achieved through a scrupulous investigation, is of great **practical value**, and will be useful for other researches in functionalism and in the study of cognitive structures of language. Certain results can be used in theoretical and practical language courses, textbooks and manuals as well as be helpful to specialists who are involved in research of modern discourses in their relation to information technology, epistemology, social developments.

The research consists of an introduction, four chapters, a conclusion and a list of references. The basic statements made in the Introduction and the Chapters are provided with additional explanations in the notes. The Introduction presents the object of the study, the factive material, topicality and novelty, aims and objectives, the practical and theoretical significance of the research in the proposed field as well as the methods applied to the investigation. Chapter I reviews the creation and development of science fiction, discusses it as a modern functional-stylistic register of speech based on the correlation of factitious and fictitious linguistic units, emphasises the role of the concept of change in it, and presents its functional classification. Chapter II analyses science fiction in its linguistic and extralinguistic references to physics, anthropology, sociology and philosophy. Chapter III focuses on science fiction in its relation to some genres of fantasy proper and realistic fiction, provides a detailed analysis of tropological, syntagmatic, terminological, neological

usages that are part of the science fiction linguistic system and are means of realization of a combined “cognitive-imaginative” function of the genre. In Chapter IV an attempt is made to reveal the linguostylistic peculiarities of science fiction metaphor viewing it as a product of “metaphorical blending” of conceptual and imaginative metaphors, and in certain cases – a result of literalization of metaphor. The Conclusion presents the main findings of the research.

ГАЯНЭ МУРАДЯН

Лингвостилистические особенности английского научно-фантастического дискурса в контексте конвергенции рационального и образного аспектов

Данное исследование посвящено англоязычной научной фантастике, основанной на экстралингвистической реальности и построенной на основе взаимосвязи когнитивных и образных лингвистических единиц.

Фактологическим материалом разностороннего лингвистического анализа являются научно-фантастические произведения, созданные в период «Новой волны» (1960-1980) и «Киберпанк/Посткиберпанк» (с 1980 года по настоящее время).

Актуальность исследования обусловлена той ключевой ролью, которую сегодня играет научная фантастика в создании новых форм глобальной коммуникации, формировании новых социальных отношений, культурных и информационных обменов, а также в обогащении английского языка новыми элементами.

Новизна исследования состоит в изучении научной фантастики с лингвистической точки зрения как оригинального дискурса, реализующего «когнитивно-образную» функцию посредством конкретного выбора языковых элементов.

Цель исследования – представить научную фантастику как аутентичный материал лингвистического исследования в рамках функциональной и когнитивной лингвистики, выявить коммуникативную функцию жанра и раскрыть «информирующие» и «воздействующие» языковые единицы, которые способствуют формированию дискурса. Для реализации поставленной цели ставятся и решаются следующие **задачи**: определить происхождение и развитие англоязычного научно-фантастического дискурса; представить функциональную классификацию и экстралингвистические основы жанра; анализировать материал на основе онтологического сопоставления познавательных и образных лингвистических единиц; выявить лингвостилистические особенности физического, антропологического, социального, философского подтипов научной фантастики, исследовать научную фантастику с точки зрения ее лингвистического и экстралингвистического отношения к другим литературным жанрам; выделить научно-фантастические тропы, неологизмы и термины в свете конвергенции понятий и образов; рассмотреть метафору научной фантастики как продукт «метафорического смешения»; построить таксономическую модель первичной научно-фантастической концептуальной метафоры (*Change is motion*) и вторичных субметафор; рассмотреть literalization метафоры как уникальный стилистический прием.

Для реализации указанных задач были применены следующие **методы** исследования: лингвостилистический и лингвопоэтический анализ, качественный и количественный стилистический анализ, тематическое исследование, экстраполяционный анализ, линейный метод экстраполяции, статистический анализ, идентификация и анализ концептуальной метафоры, таксономический анализ.

С **теоретической** точки зрения результаты исследования, несомненно, имеют большое значение, поскольку они определяют и уточняют функциональный характер научной фантастики, выявляют лингвистические и стилистические особенности данного литературного жанра в контексте рационального и образного аспектов, таким образом внося определенный вклад в развитие лингвистических направлений функциональной и когнитивной стилистики в целом и научно-фантастического дискурса, в частности.

Данное исследование имеет большое **практическое значение**: оно может быть продуктивным в других сферах функционального анализа дискурса и в исследованиях когнитивных структур языка. Результаты исследования могут быть использованы в теоретических и практических курсах стилистики, при составлении учебников и учебных пособий, а также в разных научно-исследовательских изысканиях и разработке методологии анализа современного дискурса.

Работа состоит из введения, четырех глав, заключения и списка литературы. Основные положения, содержащиеся во вводной части и в главах, дополняются пояснениями, данными в примечаниях. Во Введении обосновывается объект исследования, выбор фактологического материала, актуальность и новизна, цели и задачи, практическая и теоретическая значимость исследования, а также методы исследования. В Главе I рассматривается происхождение и развитие научной фантастики как современного функционально-стилистического регистра, основанного на соотношении рациональных и образных лингвистических единиц, подчеркивается роль концепции изменения в ней и приводится разработанная в работе функциональная классификация научной фантастики. В Главе II анализируются научно-фантастические лингвистические и экстралингвистические связи с такими науками как физика, антропология, социология и философия. В Главе III основное внимание уделяется научной фантастике в отношении к некоторым собственно-фантастическим жанрам и реалистической художественной литературе, подробному анализу тропологических, синтагматических, терминологических и неологических языковых единиц, которые являются частью научно-фантастической лингвистической системы и средством реализации «когнитивно-образной» функции жанра. В Главе IV рассматриваются лингвостилистические особенности метафоры научной фантастики, которая представляется как результат «метафорического смешения» концептуальных и образных метафор, а также в определённых случаях как результат литерализации метафор. В Заключении приводятся основные выводы исследования.